Ազգ
Azg
14 ՅՈՒՆԻՍ 2013 ՈՒՐԲԱԹ 99(5182)
ISSN: 1829-1651

# Անփոխարինելիներ չկա՞ն

ՄԱՐԻԵՏԱ ԽԱՉԱՏՐՅԱՆ

**«Զարմացած եմ, որ թալանչիների հետ գործ ունենք, բոլոր գործերը պետք է ուղարկվեն դատարան...Չե՞ք կարծում, որ մեր հանրության մեջ տպավորություն կստեղծվի՝ մենք էլ ենք մասնակից, հայտնաբերում ենք, բայց տուգանք չենք կիրառում: Այդ պաշտոնյաները պետք է ազատվեն աշխատանքից, ոչ մի անփոխարինելի պաշտոնյա չկա, վարչապետը քայլեր պիտի ձեռնարկի այս ուղղությամբ: Ես գտնում եմ, որ հետեւանքները լուրջ պետք է լինեն, կեղծիքներով, թալաններով, յուրացումներով զբաղված մարդկանց պետք է ազատել աշխատանքից», այս խոսքերով զայրույթախառն զարմանք էր հայտնում Ազգային ժողովի նախագահ Հովիկ Աբրահամյանը երեկ՝ լսելով Վերահսկիչ պալատի նախագահ Իշխան Զաքարյանի՝ 2012 թվականի բյուջեի վերահսկողության վերաբերյալ զեկույցում երկար թվարկվող միլիոններով ֆինանսական չարաշահումների, անարդյունավետ ծախսերի բազմաթիվ փաստեր: Ու հետաքրքրվեց, թե չարաշահում անող ոլորտների ղեկավարների հետ որ քննարկում է՝ ի՞նչ պատասխան են տալիս, ու սրա վերջն ի՞նչ է լինելու, ինչո՞ւ է այդպես: Ի. Զաքարյանն էլ տեղեկացրեց , որ վարչապետը նախարարներին խնդրել է պարզաբանել, թե ինչպես են վերաբերվում իրենց ոլորտներում արձանագրված բացահայտումներին եւ՝ նախարարների պատասխաններն այս պահի դրությամբ տեղադրված են կառավարության կայքէջում, եւ կարելի է տեղեկանալ՝ ինչ է արվել խախտումը վերացնելու ուղղությամբ:**

Տես էջ 2




# Լարսի էժան ճանապարհով հայաստանցիները «հոսում են» Ռուսաստան

Վ. ՊՈՂՈՍՅԱՆ

Ժամանակին, եւ թերեւս մինչ օրս էլ, արտագաղթի մասին խոսակցություններում կեսհեգնական, կեսկատակ ասվում էր, թե Հայաստանում մնացել են նրանք, ովքեր կամ փող չունեն ինքնաթիռի տոմս գնելու, կամ էլ, ինչպես հայտնի մուլտֆիլմի հերոսն էր ասում՝ «իրենց այստեղ էլ վատ չեն կերակրում»: Սակայն արտագաղթ ասվածն իրականում ահռելի չափերով ահագնանում է, ինչի մասին վկայություններն ու փաստերն այնքան էլ ցցուն չեն, սակայն գործընթացը կամաց-կամաց լափում է իրականությունը:

Պաշտոնական վիճակագրությունն էլ անգամ որոշ առումով ապացուցում է, որ ավելի շատ մարդիկ հեռանում են, քան վերադառնում՝ թեկուզ այդ վիճակագրությունը մատուցվում է որպես «զբոսաշրջության նպատակով հանրապետությունից մեկնածներ»:

Հայաստանի ազգային վիճակագրական ծառայության տվյալների համաձայն՝ 2013-ի հունվար-մարտ ամիսներին հանրապետությունից մեկնել է մոտ 138 հզ. մարդ, եւ այդ ցուցանիշը նախորդ տարվա նույն ժամանակահատվածի համեմատությամբ աճել է մոտ 15 տոկոսով:

Ու որքան էլ պետական մոտեցմամբ ու պաշտոնապես փորձեր արվեն բացատրելու, թե սրանք բոլորը զբոսաշրջիկներ են ու որ, ասենք, այս օրերին վերադառնում են Հայաստան, ոչ միայն տրամաբանական չէ, այլեւ անհավատալի է: Անհավատալի է, քանի որ հանգստի մեկնողները ամիսներով չեն դուրս լինում, իսկ «աշխատանքային զբոսաշրջության սիրահարները» այդ ժամանակահատվածում ոչ գնում են, ոչ էլ վերադառնում: Ստացվում է, որ հանրապետությունից, բոլոր պարագաներում, ավելի շատ մարդ հեռացել է:



Տես էջ 3

# Օձերն արդեն ակտիվացել են

Ելնելով մեր երկրի աշխարհագրական դիրքից՝ այստեղ օձերի առկայությունը բնական է: Բացի դրանից՝ Հայաստանում առկա օձերի տեսակներից ոչ բոլորն են թունավոր: Բայց, անկախ հանգամանքներից, մարդիկ կարծում են՝ օձերը վտանգավոր են ու վերջ:

«Էկզոտարիում» ընկերության տնօրեն **Կարեն Մարտիրոսյանը** ասում է. «Կան օձերի տեսակներ, որոնք քաղաքաբնակ են, օրինակ, նկուղներում են ապրում»: Ըստ Կարեն Մարտիրոսյանի՝ Հայաստանում կա 23 օձատեսակ, որից թունավոր է ընդամենը 4-ը, իսկ մարդու առողջության համար վտանգավոր են գյուրզան եւ հայկական իժը:

Հանրապետության գլխավոր թունաբան Միքայել Գաբրիելյանն ասում է՝ հանրապետությունում օձերի ու կարիճների խայթոցի դեպքերն անցյալ տարվա համեմատ պակասել են: Անցած տարի հանրապետությունում գրանցվել է օձի խայթոցի 156 դեպք՝ մահվան 2 ելքով «Իսկ այս տարի ունեցել ենք մոտավորապես 14 դեպք», ասում է գլխավոր թունաբանը:

Միքայել Գաբրիելյանը երեկվա ասուլիսի ժամանակ նաեւ խորհուրդ տվեց օձերի հանդիպելիս ինքնուրույն որեւէ քայլ չձեռնարկել, այլ դիմել փրկարարների օգնությանը. «Իսկ եթե օձը կծել է, ապա ամենաառաջին օգնությունը բերանով շուտ արտածծելն է օձի կծած վերքից եւ թքելը: Դա բերանի խոռոչի, կերակրափողի մեջ չի ներծծվում: Ժողովրդի մեջ ասում են, եթե ատամ կա փչացած, չի կարելի, բայց դա չի ներծծվում: Պետք է լինի արյունահոսող բաց վերք բերանի խոռոչում, այդ դեպքում թույնը կազդի»:

Մասնագետները հավելում են՝ թույնն արտածծելուց հետո հիվանդը պետք է պառկի հորիզոնական դիրքով ու կծած տեղը թողնի անշարժ: Եվ հնարավորինս շուտ հիվանդին պետք է հասցնել մոտակա հիվանդանոց:



Ի. Պ.

# Վաղվա «Ազգ. Մշակույթ-Հավելվածում»

Բեյրութում վերջերս լույս ընծայված «Մեր բանաստեղծները՝ Հայաստանի փառքը կերտողները» հայ բանաստեղծության շքեղագույն հատորի անդրադարձը հրատարակման աշխատանքներին մասնակցած Երվանդ Տեր-Խաչատրյանի եւ Շահեն Խաչատրյանի հետ մեր հարցազրույցում:

Գուրգեն Մահարու արխիվից շարունակում է էջեր ներկայացնել Գրիգոր Աճեմյանը. «Այգեստանները Մահարի-Շահնուր նամակագրությունում»:

Երեւանի «Մոսկվայի տան» բեմում Ի. Տուրգենեւի «Մի ամիս գյուղում» պիեսի բեմադրության արձագանքը՝ Լեւոն Մութաֆյանի թատերախոսականում:

Ակնարկ ճապոնական քաղաքակրթության մշակութային երեսակներին եւ այս ժողովրդի բացառիկ հետաքրքրական ավանդույթներին. ներկայացնում է Անի Մագումյանը:

Էջեր Աշոտ Պատմագրյանի հուշագրությունից:

Հակոբ Ծուլիկյանի անդրադարձը Հովհաննես Փիլիկյանի «Ծովանկար իմ մօր օրուայ մասին» պոեմի՝ մեկ գրքում 20 լեզուներով թարգմանությանը:

Ս. Բ.

# Իրանում նախագահական ընտրություններ են

*Արդյունքները չեն անդրադառնա Հայաստանի հետ հարաբերությունների վրա, եթե Ադրբեջանը չխաթարի դրանց ընթացքը*

ՀԱԿՈԲ ՉԱՔՐՅԱՆ

Այսօր Իրանի Իսլամական Հանրապետությունում անցկացվում են նախագահական ընտրություններ: Միմյանց հետ կմրցակցեն նախագահի 6 թեկնածուներ, որոնցից 3-ը պահպանողական են, 2-ը՝ անկախական, 1-ը՝ բարենորոգիչ: Թեկնածուների թվում են նախկին արտգործնախարար Ալի Աքբար Վելայեթին, Ազգային անվտանգության գերագույն խորհրդի նախագահ, գլխավոր բանակցող Սաիդ Ջալիլին, ինչպես նաեւ Հասան Ռոհանին, որը, լինելով միակ բարենորոգիչը թեկնածուներից, թուրքական «Դունիա բուլթենի» կայքէջի վկայությամբ, Թուրքիային մոտենում է վերապահումով:

Ի դեպ, հունիսի 11-ին հյուրընկալելով հայաստանյան լրատվամիջոցների ներկայացուցիչներին դեսպանատանը, նախագահական ընտրությունների մասին նրանց իրազեկել էր Հայաստանում Իրանի դեսպան Մոհամմադ Ռեյիսին: Անկախ իրազեկումից՝ ընտրությունների արդյունքները հազիվ թե անդրադառնան Իրանի արտաքին քաղաքականության վրա, որը սառնասրտորեն վարել են անխտիր բոլոր նախագահները:

Այդ արդյունքները սկզբունքորեն չեն անդրադառնա նաեւ Հայաստան-Իրան հարաբերությունների վրա, որովհետեւ դրանց հիմքում երկու ժողովուրդների բարեկամությունն է, եւ չկա որեւէ լուրջ խնդիր կամ հակասություն, որ խաթարի այդ հարաբերությունների ընթացքը, եթե, իհարկե, չխաթարի իրանցիների դավանակից Ադրբեջանը: Խաթարման փորձերը մշտական են, իսկ ադրբեջանական փորձերին արձագանքներ, թեկուզ հազվագյուտ, այնուամենայնիվ եղել են:

Արձագանքի պարագայում խոսքը իրանական մամուլում հրապարակված առանձին հոդվածների մասին է, որոնք եղել են ի նպաստ հայ սպանելու համար Ադրբեջանի ազգային հերոս հռչակված եւ պետական պարգեւների արժանացած ստոր մարդասպան Ռամիլ Սաֆարովի: Ի տարբերություն մամուլի՝ իրանական հեռուստատեսության հաղորդավարն էլ Թեհրան-Բաքու հեռուստակամրջի ժամանակ հեռախոսով տողերիս հեղինակի կարծիքին դիմելիս արդարացրել էր մարդասպանին, թե դուք էլ Խոջալուում ադրբեջանցիներին եք սպանել:

Մինչդեռ Ղուրանը դատապարտում է ոչ միայն մարդու սպանությունը, այլեւ բոլոր էակների՝ միջատներն ու բույսերը ներառյալ, դիտավորյալ ոչնչացումը, քանի որ Արարիչն է ստեղծել բոլորին: Ավելին՝ «սալամի» հետ միեւնույն արմատից առաջացած իսլամն էլ խաղաղության կրոն է, որքան էլ Արեւմուտքում ներկայացվի որպես ահաբեկչական:

Տես էջ 3

# Ո՞ւմ շահերն է պաշտպանում Դեղարտադրողների ու ներմուծողների միությունը

Որ վերջին մի տարում դեղերը նկատելի եւ բավականին շատ թանկացել են ու շարունակում են թանկանալ, ակնհայտ է, ու դա կարող է հաստատել յուրաքանչյուրը, ով նույն դեղամիջոցից պարբերաբար կամ անընդմեջ օգտվում է: Սակայն Հայաստանի դեղարտադրողների ու ներմուծողների միության նախագահ **Սամվել Զաքարյանը** երեկ «Հենարան» ակումբում լրագրողներին հակառակն էր համոզում էր, թե դեղերը շատ չեն թանկացել, իր ասելով, վերջին մի տարում ընդամենը 3-4 տոկոսով, ինչն էլ կապված է դոլարի կուրսի, տրանսպորտային գների տատանումների հետ: Սամվել Զաքարյանը դեղերի թանկացումները կապում է նաեւ պահանջարկի հետ, ասելով, որ դեղեր կան թանկանում են առանձին սեզոնների, օրինակ՝ գարնանը թանկանում են ալերգիայի դեղերը: Այսինքն՝ տվյալ դեղը թանկանում է, եթե տարվա այդ եղանակին դրա պահանջարկը մեծ է:

Բանախոսը նշում է՝ կան դեղեր, որոնք էժանանում են, եւ նա այն կարծիքին է, թե գնային տատանումները մեծ չեն, ու գների բալանսը հիմնականում պահվում է:




Սամվել Զաքարյանը որքան էլ պնդի, թե դեղերի գները շատ չեն ավելացել, նրա խոսքին հավատալը դժվար է, քանի որ նա հակված է պաշտպանելու շահերը հենց դեղարտադրողների ու ներմուծողների, որոնց միության նախագահն է: Նրա ղեկավարած միությունը ոչինչ չի անում դեղերի թանկացումները կանխելու համար, ասում է՝ ոչ մեկի բիզնեսին չեն խառնվում ու բիզնեսն է որոշում՝ ինչ ռազմավարություն ընտրել վաճառքի համար, իսկ դեղատունն էլ որոշում է, թե ինչքա՞ն կվաճառի իր ապրանքը: Ստացվում է, որ Դեղարտադրողների ու ներմուծողների միության նախագահը պարբերաբար հանդես է գալիս մամուլի ասուլիսով՝ պաշտպանելու նրանց շահերը, ովքեր անբարեխիղճ կերպով անընդհատ թանկացնում են դեղորայքը: Հետեւաբար նրա կարծիքներն ու հայտարարությունները լուրջ ընկալել պետք չէ:

**Ի. Պ.**

# Անփոխարինելիներ չկա՞ն

*1-ին էջից*

ԱԺ նախագահին երկրորդեց ԱԺ փոխնախագահ **Էդուարդ Շարմազանովը**, թե ՝ թալանչիները պետք է լինեն համապատասխան տեղերում, ու չնայած դամոկլյան սրի գործառույթի կոչ չի անում, բայց եթե թերացել են, դա մեկ բան է, եթե մսխել են՝ պիտի հայտնվեն համապատասխան տեղում, որ առաջ պետք է ազատվել կոռումպացած չինովնիկներից, եւ «չաղ ու բախտավոր չինովնիկների ժամանակներն անցյալում են»: Առհասարակ՝ Վերահսկիչ պալատի հաշվետվությանը 2012 թվականի բյուջեի վերահսկողության մասին պատգամավորները ոգեւորությամբ արձագանքում էին, մի մասի հարցերով լրացուցիչ չարաշահումների մասին տեղեկատվություն բարձրաձայնվեց, մի մասը ՎՊ-ից պահանջում էր մասնացույց անել ելքեր վիճակից, ուրիշները մեղադրում էին, թե ինչու դատախազություն չեն ուղարկում գործերը, քանի որ հաշվետվության ուղիղ կեսը հաղորդում է հանցագործության մասին:

Այնպիսի տպավորություն էր, թե երկրում օրենսդիր, գործադիր եւ մյուս օղակների փոխարեն միայն Վերահսկիչը պետք է բոլոր հարցերի պատասխանը տա, իսկ պատգամավորներն ու ԱԺ ղեկավարությունը բոլորովին տեղյակ չեն, օրինակ, հենց այնպիսի օրենքների ընդունումից, որոնք սողանցքեր են թողնում «ատկատների» ու ֆինանսական չարաշահումների համար, այս կամ այն անձի գործարար շահերն են արտացոլում ու մասամբ այդպիսի օրենքներն են հենց անարդյունավետ ծախսերի ու ֆինանսական չարաշահումների դուռ բացում: Վերադառնալով հաշվետվությանը, նշենք, որ ՎՊ նախագահ Իշխան Զաքարյանը թվարկեց բոլոր այն խախտումները, որոնք ընդհանրական էին հատկապես քաղաքաշինությանը (շինարարության), գնումների ոլորտներում՝ անարդյունավետ եւ ուռճացված ծախսեր, անորակ աշխատանք, չհիմնավորված գներ եւ այլն: Շինարարության ոլորտում կիրառված չափից ավելի մեծ տոկոսադրույքները բերել են նրան, որ պետբյուջեի միջոցներից կատարվող շինարարությունը 2-3-4 անգամ ավելի թանկ է իրականացվում, այս ուղղությամբ ՎՊ-ն իրական տոկոսադրույքների վերաբերյալ նախագիծ է ուղարկել կառավարություն, կառավարությունից էլ պետք է նայեն ու կոմպրոմիսի գան: Հատկապես կոռուպցիոն ռիսկեր են ճանապարհաշինության ոլորտում, որտեղ նախահաշվային գները էականորեն եւ հնարավորինս ավելացվում են: Գնումների ոլորտում ապրանքները ձեռք են բերվում բարձր գներով, քան իրականում է, եւ անգամ այդ դեպքում արդյունք չեն տալիս: Մրցույթները հաճախ պայմանավորված են: «Դատաիրավական ԾԻԳ»-ը այնպիսի խախտումներով է աշխատել, որ դրանց վերաբերյալ գործն ուղարկված է դատախազություն: Օրինակ՝ 80 տեղեկատվական տերմինալ է ձեռքբերել՝ ամեն մեկի վրա էականորեն ավելի շատ գումար ծախսելով, դրանց ձեռքբերման գումարները պայմանագրով պետք է փոխանցվեին մի ընկերության, բայց այլ՝ ամերիկյան ընկերության են փոխանցվել, որը ՎՊ-ն ստուգելու իրավունք չունի: Մարզերում դասարանների կառուցման վրա ծախսվածի եւ իրական արժեքների միջեւ 270 մլն դրամի տարբերություն կա:

Էկոնոմիկայի նախարարությունում խախտումների առավել ցայտուն օրինակներով փոքր ձեռնարկություններին աջակցող վարկերը չեն ծառայել իրենց նպատակին, կասկածի տակ է նրանց վերադարձնելիությունը. 2010 թվականին վարկ ստացած 30 ձեռնարկությունից գործում է 8-ը, 2011- ին վարկ ստացած 17-ից՝ 8-ը, իսկ անցած տարի 130 վարկ ստացած կազմակերպությունից 11-ը դադարեցրել է գործունեությունը: Ջարաբաստիկ բիոզուգարանների 123 մլն դրամանոց ծախսն անարդյունավետ է, քանի որ նրանք չեն գործում, զբոսաշրջության ոլորտում նախարարությունը պատշաճ վերահսկողություն չի իրականացրել:

Խոսվեց Գյումրու տեխնոպարկի շինարարության մինչեւ 52 մլն դրամանոց նախատեսումից միայն 250 հազար դոլար ծախսելու մասին, ու եթե այդպես դանդաղ տեմպով շարունակվի շինարարությունը՝ մի հարյուր տարի պետք կլինի տեխնոպարկը սարքելու համար: Բազմաթիվ չարաշահումների այլ օրինակներ էլ բերվեցին. օրինակ՝ թե ինչպես մի գնով այլ երկրից գնված պարենային ապրանքը սահմանի վրա մի քանի անգամ ավելի բարձր գնով է արդեն Հայաստան մտնում: Կամ՝ քաղաքապետարանի բազմաթիվ խախտումներից խոսվեց (իհարկե նշելով, որ 80 տոկոսը հետո շտկվել են)՝ կադաստրային արժեքից էժան հողի վաճառք, փակ աճուրդներով եւ շատ էժան հողի օտարումներ, աճուրդային մեկնարկային գների ակնհայտ շեղումներ շուկայական գներից:

Նուբարաշենի աղբավայրի եւ ճապոնական ֆիրմայի՝ այնտեղ աշխատելու վերահսկողությունը մի առանձին խնդիր է, որին այլ առիթով կանդրադառնանք: Ասենք միայն, որ քննարկումը հետաձգվեց մինչեւ երկուշաբթի գումարվելիք արտահերթ նիստ, եւ դատելով պատգամավորների հարցերից եւ պատժելու, գործերը դատախազություն ուղարկելու պահանջներից՝ նրանք վճռական են տրամադրված ավել մեծ ռակուրսով ի ցույց դնելու խախտումները:



# Կյանքից հեռացավ հայտնի հասարակական գործիչ Գեղամ Լեւոնի Խալաթյանը



**Խոր կսկիծով հայտնում ենք, որ երկարատեւ հիվանդությունից հետո, 2013 թ. հունիսի 12-ին կյանքից հեռացավ իսկական հայրենասեր, Ռուսաստանի եւ Հայաստանի հայտնի հասարակական գործիչ Գեղամ Լեւոնի Խալաթյանը:**

**Գ. Լ. Խալաթյանը իր կյանքի ավելի քան 25 տարին նվիրել է հասարակական գործունեությանը, եւ նրա բոլոր ջանքերն ուղղված էին ռուսահայերի եւ ՌԴ քաղաքացիական հասարակության ներուժի ամրապնդմանը:**

**Խալաթյանը Ռուսաստանի հայերի միության Մոսկվայի քաղաքային բաժանմունքի՝ ՌԴ խոշորագույն տարածաշրջանային ազգային-մշակութային կառույցի հիմնադիրներից մեկն էր եւ նախագահը: Նա նաեւ ընտրվել էր ՌՀՄ փոխնախագահ, Մոսկվայի կառավարության առընթեր ազգությունների գործերի խորհրդի նախագահ եւ ՌԴ տարածաշրջանների զարգացման նախարարության կոնսուլտատիվ խորհրդի անդամ:**

**Գեղամ Խալաթյանին ճանաչում էին որպես ազնիվ, օրինավոր, խելացի, գրագետ, աշխատասեր, զգայուն եւ շատ համեստ մարդու: Նրա մահը մեծ կորուստ է հարազատների, մերձավորների, բարեկամների, գործընկերների, զինակիցների, համախոհների համար եւ անդառնալի կորուստ՝ հայկական սփյուռքի եւ ՌԴ քաղաքացիական հասարակության համար:**

**Մոսկվայում Գ.Լ. Խալաթյանին հրաժեշտ կտան 2013 թ. հունիսի 14-ին, ժամը 14-ին, քաղաքային թիվ 52 կլինիկական հիվանդանոցի սգո արարողությունների սրահում (Պեխոտնայա փ., 3, մետրոյի «Օկտյաբրսկոյե պոլե» կայարան): Համաձայն իր կտակի, հուղարկավորությունը տեղի կունենա Հայաստանում: Երեւանում հրաժեշտը կկայանա հունիսի 15-ին, ժամը 19-ին, Երեւանի Մաշտոցի պող. թիվ 15 շենքի 97-րդ բնակարանում: Թաղումը՝ հունիսի 16-ին, ժամը 14-ին:**

**Խոր կսկիծով՝**

ՌՀՄ փոխնախագահ
ԼԵՎՈՆ ՄՈՒԿԱՆՅԱՆ

# Ցավակցություն

Ռուսաստանի հայերի միության եւ Հայերի համաշխարհային կոնգրեսի նախագահ Արա Աբրահամյանը վշտացած է ՌՀՄ փոխնախագահ, հայտնի հասարակական գործիչ **Գեղամ Լ. Խալաթյանի** մահվան կապակցությամբ եւ իր ցավակցություններն է հայտնում նրա հարազատներին եւ ընկերներին:

Վշտակցությանը միանում են ՌՀՄ հայաստանյան մասնաճյուղի աշխատակիցները:

# Ցավակցություն

Օրերս Մոսկվայում դավադրաբար սպանված **Հովհաննես Մուրադյանի** մահվան կապակցությամբ Ռուսաստանի հայերի միության նախագահ Արա Աբրահամյանը խորապես ցավակցում է նրա ընտանիքին, բոլոր հարազատներին եւ ընկերներին:

# Նավասարդ արք. Կճոյանը՝ օֆշորային սկանդալի մասին

**Արարատյան հայրապետական թեմի առաջնորդական փոխանորդ Նավասարդ արք Կճոյանն Արարատյան հայրապետական թեմի մամուլի հաղորդագրությամբ արձագանքել է վարչապետ Տիգրան Սարգսյանի, իր եւ գործարար Աշոտ Սուքիասյանի՝ օֆշորային գոտում ընկերություն գրանցելու մասին «Հետք» հրապարակմանը. «Այսպես կոչված «օֆշորային սկանդալի» հետ կապված, Սրբազանն արդեն հայտարարել է, որ ձեռներեցությամբ զբաղվելու պարագայում երբեք չէր շարունակի ծառայել Հայ առաքելական եկեղեցուն. գաղտնի եւ ընդհատակյա գործունեությունը հարիր չէ իր սկզբունքներին:**

**Իր անվան շուրջը պարբերաբար տարածվող ապատեղեկատվությունների փաստի առիթով իրավապահ մարմիններին չդիմելու զարմանքի առնչությամբ Սրբազանը հայտարարում է, որ այդօրինակ մեթոդները խորթ են հայ հոգեւորականի մասին իր ունեցած պատկերացումներին: Տարածվող տեղեկությունները, թե, իբր, Նավասարդ արք. Կճոյանը ներկա է եղել ադամանդագործության զարգացմանն առնչվող պետական հանձնաժողովներից մեկի նիստին, չեն համապատասխանում իրականությանը: Սրբազանը դատապարտում է Երեւանի Սբ Սարգիս եկեղեցու խաչքավորներից մեկի՝ Աշոտ Սուքիասյանի հետ իր շփման շահարկումը՝ իրականության հետ որեւէ աղերս չունեցող սեփական ենթադրություններն ու դատողությունները փաստարկելու նպատակով», ասված է հաղորդագրության մեջ: Միաժամանակ նշվում է, թե նա բարձր է գնահատում ժողովրդավարական հասարակության արժեքները, սակայն խոսքի ազատության չարաշահումը համարում է վտանգավոր եւ վնասակար առաջին հերթին հենց այդ արժեքների ջատագովների համար ու ազաս խոսքը մարդու պատվի հետ խաղալու ինդուլգենցիա չէ:**

«ԱԶԳ» ՕՐԱԹԵՐԹ
Հրատարակութեան ԻԱ տարի
Հիմնադիր եւ հրատարակիչ
**«ԱԶԳ ՕՐԱԹԵՐԹ» ՍՊԸ**
Երեւան 0010, Հանրապետութեան 47
e-mail: azg@azg.am, azg2@arminco.com
**www.azg.am**
Գլխաւոր խմբագիր
ՅԱԿՈԲ ԱՒԵՏԻՔԵԱՆ հեռ. 060 271117
Խմբագիր
ՊԱՐՈՅՐ ՅԱԿՈԲԵԱՆ հեռ. 060 271113
Հաշվապահութիւն (գովազդ) հեռ. 582960, 060 271112
Լրագրողների սենեակ հեռ. 060 271118
Համակարգչ. ծառայութիւն հեռ. 060 271115
***Շուրջօրեայ լրահաւաք ծառայութիւն***
հեռ 060 271114, 010 529353
Համակարգչային շարուածքը՝ «Ազգ» թերթի

Նիւթերը չեն գրախօսւում ու չեն վերադարձւում
Գ տառով յօդուածները գովազդային են, որոնց բովանդակութեան համար խմբագրութիւնը պատասխանատւութիւն չի կրում:

"AZG" Daily NEWSPAPER
Editor-in-chief
H.AVEDIKIAN / phone: 374 10 521635
47 Hanrapetoutian st.,
Yerevan, Armenia, 0010

ԱԶԳ **Անցուդարձ**

# Հայաստանի տնտեսության 5 տոկոս աճի կանխատեսում առաջիկա 3 տարիներին

## *Ադրբեջանի համար Համաշխարհային բանկը 2015-ին տնտեսական աճի տեմպի նվազում է կանխատեսում*

Համաշխարհային բանկի (ՀԲ) հունիսի 12-ին հրապարակած «Գլոբալ տնտեսական հեռանկարներ» զեկույցում համաշխարհային տնտեսության համախառն ներքին արդյունքի (ՀՆԱ) 2,2 տոկոս աճ է կանխատեսվում ընթացիկ տարվա համար: 2014-ին Համաշխարհային բանկը կանխատեսում է համաշխարհային տնտեսության 3 տոկոս ՀՆԱ աճ, 2015-ին՝ 3,3 տոկոս: Ըստ զեկույցի, տնտեսապես զարգացած երկրների հետ կապված ռիսկերը նվազել են եւ համաշխարհային տնտեսական աճը թափ է հավաքում, անկախ եվրոգոտու տնտեսության շարունակվող կրճատումից: Այնուհետեւ, ներկայացվում են ըստ տարածաշրջանների տնտեսական աճի վերաբերյալ կանխատեսումները: Հայաստանը Եվրոպայի եւ Կենտրոնական Ասիայի տարածաշրջանում գտնվող 21 երկրների մեջ է, որոնց թվում են ԱՊՀ եւ արեւելաեվրոպական երկրները: ՀԲ կանխատեսմամբ, այս տարածաշրջանի տնտեսական աճը 2013-ին կլինի 2,8 տոկոս, որը մինչեւ 2015-ը կհասնի 4,2 տոկոսի: Մեզ առավել հետաքրքրում է, թե ինչ կանխատեսումներ է արված Հայաստանի ՀՆԱ 2013-2015 հնարավոր զարգացումների վերաբերյալ:

Նախ հարկ է նշել, որ Հայաստանն իսկապես 2012-ին Եվրոպայի եւ Կենտրոնական Ասիայի տարածաշրջանի երկրներից երկրորդ ամենաբարձր տնտեսական աճ՝ 7,2 տոկոս ապահոված երկիրն է եղել Տաջիկստանից հետո, որտեղ տնտեսական աճը կազմել էր 7,5 տոկոս: 2013, 2014, 2015 թվականներին, ՀԲ կանխատեսմամբ, Հայաստանին ՀՆԱ-ն կաճի յուրաքանչյուր տարի 5-ական տոկոսով: Ավելի բարձր տնտեսական աճի տեմպեր՝ 6-7,5 տոկոսի միջակայքում, ՀԲ-ն կանխատեսում է միայն միջինասիական երկրների՝ Ղրղզստանի, Ուզբեկստանի, Տաջիկստանի համար:

Մեր հարեւան Վրաստանի համար ՀԲ-ն կանխատեսում է 2013-ին՝ 4 տոկոս, 2014-ին՝ 6,3 տոկոս եւ 2015-ին՝ 6 տոկոս ՀՆԱ աճ: Ադրբեջանի դեպքում կանխատեսվում է ավելի ցածր աճի տեմպ, քան Հայաստանի եւ Վրաստանի պարագայում է: Համաշխարհային բանկի զեկույցի համաձայն, այս եւ եկող տարիներին Ադրբեջանը կունենա 4,8-ական տոկոս տնտեսական աճ, իսկ 2015-ին՝ 2,9 տոկոս: Նշենք նաեւ, որ 2012-ին Ադրբեջանի տնտեսական աճը կազմել էր 2,2 տոկոս, իսկ 2011-ին՝ 0,1 տոկոս: 2015-ին Ադրբեջանի տնտեսական աճի տեմպի նվազման կանխատեսումը պատահական չէ, քանի որ այդ երկրի տնտեսության հիմնական շարժիչ ուժ նավթի պաշարները աստիճանաբար սպառվում են, ինչն էլ, բնականաբար, արտացոլվելու է նրա մակրոտնտեսական, այդ թվում՝ ՀՆԱ աճի ցուցանիշների վրա:

ԱՊՀ երկրներից 2013-2015-ին Բելառուսի տնտեսական աճը կանխատեսվում է համապատասխանաբար՝ 2,5 տոկոս, 2,8 տոկոս եւ 3 տոկոս, Ղազախստանինը՝ 5 տոկոս, 5,3 տոկոս եւ 5,5 տոկոս, Մոլդովայինը՝ 3 տոկոս, 4 տոկոս եւ 5 տոկոս, Ռուսաստանի Դաշնությանը՝ 2,3 տոկոս, 3,5 տոկոս եւ 3,9 տոկոս, Ուկրաինայինը՝ 1 տոկոս, 3 տոկոս եւ 4 տոկոս:

Մեր մյուս հարեւան Թուրքիայի տնտեսական աճը, ՀԲ կանխատեսմամբ, այս տարի կկազմի 3,6 տոկոս, եկող տարի՝ 4,5 տոկոս, իսկ 2015-ին՝ 4,7 տոկոս: Տնտեսական աճի ավելի ցածր տեմպերն են կանխատեսվում այս տարածաշրջանային խմբի մեջ ընդգրկված եվրոպական երկրներ Ալբանիայում, Բուլղարիայում, Մակեդոնիայում, Չեռնոգորիայում, Ռումինիայում՝ 1-3 տոկոսի միջակայք: Սերբիայի, Լատվիայի, Լիտվայի, Կոսովոյի ՀՆԱ աճը կանխատեսվում է 3-4 տոկոս աճի միջակայք:

Վերադառնալով Հայաստանին առնչվող կանխատեսումներին՝ նկատենք, որ դրանք ավելի զգուշավոր են, քան միջին տարեկան 7 տոկոս տնտեսական աճ ապահովելու մեր երկրի կառավարության նպատակները: Այս տարվա համար թերեւս առավել իրատեսական է Համաշխարհային բանկի կանխատեսումը (5 տոկոս տնտեսական աճ), նկատի ունենալով գազի եւ էլեկտրաէներգիայի սակագների բարձրացումը եւ գյուղատնտեսությանը կարկուտի հասցրած վնասները: Սակայն 2014 եւ 2015-ին Հայաստանում 7 տոկոս տնտեսական աճի ապահովումը միանգամայն իրատեսական է, եթե, իհարկե, չլինեն արտերկրից եկող բացասական լուրջ գործոններ:

ԱՐԱ ՄԱՐՏԻՐՈՍՅԱՆ

# Orange-ի հետ բջջային կապն ու ինտերնետն առաջին անգամ հասանելի են դառնում Սյունիքի մարզում գտնվող երկու գյուղում

Երեկ Orange-ը հայտարարեց Սյունիքի մարզի երկու գյուղում՝ Գեղանուշում եւ Գոմարանում իր ծառայությունների մեկնարկի մասին: Այս գյուղերի բնակիչների համար շարժական կապի տեխնոլոգիաներն առաջին անգամ են հասանելի դառնում: Թեեւ հեռահաղորդակցության ոլորտը Հայաստանում զարգացած է, եւ ամենաժամանակակից տեխնոլոգիաները հասանելի են քաղաքների ու գյուղերի մեծ մասի բնակիչներին, այնուամենայնիվ Հայաստանում դեռ կան փոքրաթիվ գյուղեր, որոնց դեռեւս հասանելի չեն ոչ մի օպերատորի ծառայությունները: Երեկվանից սկսած՝ Orange-ի հետ Գեղանուշն ու Գոմարանը, որոնք ունեն համապատասխանաբար 280 եւ 76 բնակիչ, ունենա ոչ միայն ժամանակակից շարժական հեռախոսակապ, այլ նաեւ գերարագ ինտերնետ:



«Երջանիկ եմ լինելով այստեղ եւ ազդարարել երկու կայանների աշխատանքի մեկնարկը, որոնք պիտի ապահովեն արագ կապն ինչպես գյուղի ներսում, այնպես էլ աշխարհի հետ: Շարժական հեռախոսակապը եւ ինտերնետը անկասկած փոփոխություններ են բերում մարդկանց ամենօրյա կյանքում՝ վերջիններիս հնարավորություն տալով մշտապես կապի մեջ լինել աշխարհի հետ, լինել ավելի տեղեկացված ու ավելի մոտ հեռվում բնակվող իրենց սիրելիների հետ: Կապի առկայությունը նվազեցնում է մայրաքաղաքում ու փոքր գյուղերում բնակվողների միջեւ տարբերությունները: Orange-ը հպարտ է լինելու այն օպերատորը, որը ոչ միայն մատուցում է լավագույն որակը քաղաքներում, այլ նաեւ ստեղծում է այս հնարավորություններն այնպիսի գյուղերում, ինչպիսիք են Գեղանուշը ու Գոմարանը, որոնք որեւէ այլ օպերատորի կողմից կապ չեն ստանում», ասաց Օրանժ Արմենիայի գլխավոր տնօրեն **Ֆրանսիս Ժելիբտերը**:

Հիշեցնենք, որ իր ծառայությունների մեկնարկից հետո 4 տարուց էլ պակաս ժամկետում Orange-ի ծառայություններն այսօր հասանելի են Հայաստանի բնակչության ավելի քան 95%-ին: Ընդ որում՝ Երեւանում, Գյումրիում, Վանաձորում եւ Էջմիածնում Orange-ը կառուցել է մինչեւ 42 Մբ/վ, իսկ մնացած ծածկույթում՝ 21 Մբ/վ թողունակությամբ ցանց:

Orange-ի քաղաքականությունն է, մշտապես հոգալով ցանցի տեխնիկական բարձր որակի մասին, շարունակել ընդլայնել իր ծառայությունների մատուցումը գյուղական համայնքներում՝ ներառյալ այնպիսի բնակավայրեր, որոնք չեն գտնվում ոչ մի օպերատորի ծածկույթում, ինչպես Սյունիքի մարզի Դիցմայրի, Բնունիս եւ Լոռու մարզի Անտառամուտ ու Կաճաճկուտ գյուղերը:

***ԻՆՏԵԳՐԱՑԻՈՆ ԳՈՐԾԸՆԹԱՑՆԵՐ***

# Զարգացման նոր հեռանկարներ ԵՄ Ասոցացման համաձայնագրի շնորհիվ

**Հայաստան-ԵՄ Ասոցացման համաձայնագիրը պարունակում է ոչ միայն լայն հնարավորություններ, այլեւ լուրջ մտահոգություններ: Քաղաքական եւ միջազգային հետազոտությունների կենտրոնի փորձագետ Ռուբեն Մեհրաբյանի գնահատմամբ՝ համաձայնագիրը Հայաստանին կօգնի տնտեսական զարգացման նոր հեռանկարներ բացել, օգնել մարդու իրավունքների եւ հիմնարար ազատությունների հիմքի վրա քաղաքացիական հասարակություն կառուցելու հարցում: Եթե գործընթացում ներգրավված լինի ամբողջ տարածաշրջանը, համաձայնագիրն ավելի մեծ նշանակություն կարող է ունենալ մեր երկրի համար, ցավոք, ներկա դրությամբ այն անիրատեսական է: Ըստ Մեհրաբյանի՝ հետխորհրդային երկրներում Եվրամիության ինտեգրման գործընթացին խանգարում են օլիգարխիան, կոռուպցիան ու կրիմինալը: Հետեւաբար, քանի այս խնդիրները չեն լուծվել, Եվրամիության հետ ինտեգրվելու մասին հույսեր չենք կարող փայփայել: Ըստ Մեհրաբյանի, Հայաստանն այս հարցի վերաբերյալ այլընտրանք չունի եւ ամեն ինչ պետք է անի համաձայնագիրը ստորագրելու համար, քանի որ այն զարգացման նոր հեռանկարներ է բացելու: Սակայն բարեփոխումներն ու պարտավորվածությունները կդառնան լուրջ մարտահրավեր Հայաստանի համար**

**Ըստ Տարածաշրջանային հետազոտությունների կենտրոնի տնօրեն, քաղաքագետ Ռիչարդ Կիրակոսյանի՝ Ասոցացման համաձայնագրի ստորագրումը Հայաստանի համար զարգացման նոր ռազմավարական հնարավորություններ կստեղծի: Կիրակոսյանն առանձնացրեց 4 ռազմավարական հնարավորություն, որոնցից կարող են օգտվել կողմերը: Առաջին հերթին, համաձայնագրի ստորագրումը հնարավորություն է հենց Եվրամիության համար, քանի որ այս կառույցը լծակ կտա՝ Հայաստանում ժողովրդավարական զարգացումներն ավելի առաջ մղելու համար: Ներկայիս մեկուսացման պայմաններում նման համաձայնագիրը ինտեգրման հնարավորություն կտա: Այս կերպ կլուծվեն նաեւ տարածաշրջանային հարցեր, քանի որ ԵՄ-ն առաջարկում է տարածաշրջանային կայունություն: Այս առնչությամբ Հայաստան-Եվրամիություն հարաբերությունների լավացումը բխում է Ռուսաստանի շահերից, քանի որ նրան անհրաժեշտ է զարգացած, կայացած եւ ուժեղ գործընկեր-հարեւան:**

**Հայաստան-ԵՄ Ասոցացման համաձայնագրի բանակցությունները մեկնարկել են 2010-ի հուլիսի 19-ին Երեւանում: Եվրամիության հետ Հայաստանի համագործակցությունը կարգավորող հիմնական փաստաթուղթը՝ Գործընկերության եւ համագործակցության համաձայնագիրն է, որ ուժի մեջ է մտել 1999-ի հուլիսին: Ասոցացման համաձայնագիրը փոխարինելու է ներկայումս գործող Գործընկերության եւ համագործակցության համաձայնագրին: Դրանում արտացոլվելու են տնտեսական ինտեգրման, ազատ տեղաշարժի եւ էներգետիկայի հարցերի վերաբերյալ համագործակցության ուղենիշները: Համաձայնագիրն ունենալու է նաեւ ԵՄ ընդհանուր արտաքին եւ անվտանգության քաղաքականության ոլորտում համագործակցության բաղադրիչներ:**

Հ. Հ.

# Լարսի էժան ճանապարհով հայաստանցիները «հոսում են» Ռուսաստան

*1-ին էջից*

**Իսկ այն հիմնական «պահող» գործոնը, որ ոմանց համար կապվում է ինքնաթիռի տոմս չունենալու հետ, թերեւս էլ գործունակ չէ: Ընդ որում, գործունակ չէ ոչ այն պատճառով, որ օդային փոխադրումները Հայաստանում էժանացել են, այլ որովհետեւ ցամաքով Հայաստանը լքելու շատ ավելի էժան ուղին արդեն քանի ամիս տանում եւ այդպես էլ չի վերադարձնում մարզերի բնակչության մի զգալի մասին:**

**Ռուս-վրացական սահմանի Վերին Լարսի անցակետով մեկ անգամ անցած յուրաքանչյուր մարդ նախ զզվանքի զգացողություն է ունենում, հետո էլ՝ չարության: Զզվելի է, քանի որ ժամեր շարունակ հարկ է լինում սպասել անհայտ ուղղությամբ ու անորոշ ժամանակով կորչող, որքան էլ տարօրինակ լինի, ռուս սահմանապահներին, իսկ նաեւ բարկացնում է, քանի որ հին խորհրդային ավանդույթների համաձայն՝ ամեն ռուս սահմանապահ ու այդ կողմերում թեկուզ պարապ թրեւ եկող իր «բաժինն» է պահանջում:**

**Բայց սա հարցի էական ու ցավալի կողմը չէ, ավելին, այդ սահմանը հատող Հայաստանի քաղաքացիներից շատ քչերին է հուզում: Ռուս-վրացական սահմանի ռուսաստանյան կողմի առաջին իսկ բնակավայր Հայաստանից կարելի է հասնել երթուղային տաքսի կոչվածով ոչ ավել, քան մի 25000 դրամով, ինչն էլ հենց սկիզբ է դնում ցավալի զգացողությանը. մարզերի բնակչությունը, որ մի քանի հարյուր դոլար չուներ ինքնաթիռի տոմս գնելու համար, ոչ մեծ դժվարությամբ, շատ հաճախ իրար վրա դնելով ծեր ծնողների խղճուկ թոշակը, գտնում է այդ մի քանի տասնյակ հազար դրամն ու՝ հայդա Ռուսաստան...**

**Վերջին շրջանում մարզերում լինելը նաեւ հնարավորություն էր սեփական աչքերով տեսնելու, թե ինչպես էին իմ հայրենակիցները խմբով խցկվում 25000-անոց «մարշրուտկաներն» ու հեռանում հայրենի մեծ ու փոքր գյուղերից եւ ավաններից, հեռանում Ռուսաստան՝ սկզբնական շրջանի համար աշխատանք գտնելու նպատակով: Ոչ հարցի են ուզում պատասխանել, ոչ էլ լուսանկարվել. «որ էստեղ մի հալի լինեի, կգնայի՞...» Այսպիսի պատասխանն ընդհանուր բնութագրական է, ու դրանից հետո մարդուն լրացուցիչ հարց տալու ցանկություն չի մնում. հո ընտանիք ու տուն թողնելը հեշտ չէ, ինչքան էլ սովորենք հայերս մեր մասին ասելու, թե դրսի հետ հավես ունենք:**

**Ու թեեւ հանրապետությունում ընդդիմության ու ընդդիմադիր կեցվածքը սովորություն դարձրած մի քանի անհաջող քաղաքական գործիչների հայտարարությունները, թե Հայաստանը դատարկվել է, իրականությանը չեն համապատասխանում, սակայն գյուղեր ու մարզային կենտրոններ այցելությունները ուզածդ ոչ ընդդիմադիրին կապացուցեն, որ դատարկվել ասվածը թեեւ իրողություն չէ, բայց շուտով կլինի, եթե այս իրավիճակը պահպանվի:**

# Մաքսային միություն. տնտեսական հաշվարկ եւ քաղաքական նպատակահարմարություն

Հայաստանի արտաքին քաղաքականությանը վերաբերող մեր օրերի ամենաքննարկվող թեման Հայաստանի ինտեգրման խնդիրն է: Մեր հասարակությունը փորձում է հասկանալ, թե դեպի ո՞ւր է շարժվելու Հայաստանը, եւ գործնականում հնարավո՞ր է արդյոք համատեղել եվրոպական ինտեգրացիայի խորացման գործընթացը ապագա Եվրասիական միության հետ, ինտեգրացիոն գործընթացները խորացնելով: Վերջին տասը ամիսների հասարակական, քաղաքական եւ փորձագիտական քննարկումների արդյունքում մեր հասարակությունը իր համար ձեւակերպել է ժամանակակից ինտեգրացիոն գործընթացներին մեր երկրի մասնակցության մոտեցման բանաձեւը: Այն հնչում է մոտավորապես հետեւյալ կերպ. Հայաստանը եվրոպական ինտեգրացիայի գործընթացը չի հակադրում եվրասիական ինտեգրման թափ հավաքող գործընթացին, այլ փորձելու է այդ գործընթացները համադրելու միջոցով լուծել տնտեսական եւ քաղաքական բնույթի կարեւորագույն խնդիրներ: Այս բանաձեւը ավելի կարճ լրագրողները նույնիսկ ձեւակերպել են, իբրեւ «ոչ թե կամ-կամ, այլ եւ-եւ»: Այս բանաձեւը ներքաղաքական կայունություն եւ քննարկումները ծավալելու ճանապարհին եվրոպամետների եւ ռուսամետների միջեւ անիմաստ, բայց շատ վտանգավոր քաղաքական առճակատում չստեղծելու ճանապարհին հանգեցրել է մի կոնսենսուսի, որտեղ գլխավոր խնդիրը՝ քաղաքատնտեսությունից գլուխ հանող եւ տնտեսագիտության մեջ ուժեղ համարվող հեղինակություններին ձայնը տալն է, ովքեր էլ հուշելու են բոլորիս, թե ինչպես է այդ բանաձեւը գործնականում կիրառվելու քաղաքական քայլերում:

## Տնտեսական հաշվարկների կարեւորությունը

Վերջին մեկ ամսվա ընթացքում շատ հետաքրքրական եւ նշանակալից քաղաքական իրադարձություններ են եղել, որոնք եվրասիական ինտեգրման հիմնախնդիրներին արտակարգ հնչողություն են հաղորդել: Հիշեցնենք, որ ԱՊՀ երկրների կառավարությունների ղեկավարների Մինսկում անցած հանդիպման շրջանակներում, Հայաստանի եւ Ռուսաստանի վարչապետները քննարկել են նաեւ Մաքսային միությանն առնչվող հարցերը: ՌԴ վարչապետ Դմիտրի Մեդվեդեւը ասել է, որ «Հայաստանն, ընդհանուր առմամբ, ցանկանում է դրանում մասնակցել: Մենք էլ ենք դա կարեւոր համարում, անհրաժեշտ է միայն պատշաճ ձեւաչափ գտնել համապատասխան համագործակցության համար»: ՀՀ վարչապետ Տիգրան Սարգսյանն էլ ասել է, որ «մեր դիրքորոշումը հստակ է, այստեղ ոչ մի կասկած չկա, եւ մեր նախագահները նույնպես քննարկել են այդ թեման: Հիմա արդեն տեխնիկական մակարդակով է անհրաժեշտ ամեն ինչ որոշել, թե ինչ տեմպերով, ինչ քայլերով շարժվել առաջ... Մենք ստորագրել ենք երկու արձանագրություն, որոշել ենք հարցերի այն հերթականությունը, որով առաջ ենք շարժվելու»,- եզրակացրել է նա: Այդ հանդիպումից չորս օր անց, Հայաստանում Ռուսաստանի նորանշանակ դեսպան Իվան Վոլինկինը իր առաջին ասուլիսում ասել է. «Ռուսաստանը ողջունում է Հայաստանի ձգտումը՝ ինտեգրվելու Եվրասիական եւ Մաքսային միություններին»: Նա նշել է, որ Եվրասիական միության հետ համագործակցության ձեւաչափը կարող է տարբեր լինել: Դեռ պարզ չէ, թե ինչ ձեւաչափով Հայաստանը կմիանա Եվրասիական կամ Մաքսային միություններին: Դա կարող է լինել ասոցիացիա, գործընկերություն կամ անդամություն: «Հարցը մանրազնին ուսումնասիրություն է պահանջում»,- եզրակացրել է դեսպանը: Հետաքրքիր է, որ հենց այս օրերին հրապարակվեցին տնտեսական հաշվարկներ, որոնք վերաբերում են Եվրոպական միության հետ խոր եւ համապարփակ առեւտրի պայմանագիրը ստորագրելու դեպքում Հայաստանի տնտեսության զարգացման հեռանկարին: «1-in.am» հայկական լրատվական գործակալության ուշագրավ հաղորդագրության համաձայն, կատարվել է միանգամից երկու հետազոտություն, որոնք տարբեր պատկերներ են ներկայացրել Հայաստանի տնտեսության համար հնարավոր օգուտների վերաբերյալ: Այսպես, տնտեսագետ Լեւոն Բարխուդարյանը իր համահեղինակների հետ հրապարակել է «Խոր եւ համապարփակ առեւտրի մասին պայմանագրի ազդեցությունը երկկողմ առեւտրական կապերի վրա» աշխատությունը, որտեղ եկել է եզրակացության, որ «ազատ առեւտրի գոտու հաստատումը Հայաստանի տնտեսության վրա էական ազդեցություն չի ունենա»: Միեւնույն ժամանակ նիդեռլանդական «Էկորիս» եւ լեհական «Քեյս» ընկերությունների կատարված հաշվարկները ցույց են տվել, որ այդ պայմանագիրը երկարաժամկետ հեռանկարում կարող է էական ազդեցություն ունենալ ինչպես երկկողմ ապրանքաշրջանառության, այնպես էլ Հայաստանի ազգային եկամտի վրա: Այսպես, հնարավոր է, որ Հայաստանի ներքին համախառն արդյունքը հինգ տարի հետո աճի 2.3%-ով: Աշխատավարձը կաճի 2.6 %-ով, իսկ որոշ ապրանքների գները կարող են իջնել: Ներմուծումը Եվրոպական միությունից կավելանա 8%, իսկ Հայաստանից արտահանումը 5 տարի հետո կարող է աճել 15%-ով: Այս երկրորդ ուսումնասիրությունը, ըստ նույն աղբյուրի, ցույց է տվել նաեւ այն բարդությունները, որոնք ընկած են այս ցուցանիշներին հասնելու ճանապարհին: Վերջերս ռուսաստանյան ԶԼՄ-ները հրապարակել են նաեւ Մաքսային միության ներուժի անընդհատ մեծացման մասին կոնկրետ վիճակագրական տեղեկություններ: Այն, որ Մաքսային միությանը անդամակցելու հետաքրքրություն դրսեւորել են ոչ միայն նախկին Խորհրդային Միության տարածքի որոշ երկրներ, այլեւ հեռավոր արտասահմանի այնպիսի պետություններ, ինչպիսիք են Վիետնամը, Նոր Զելանդիան եւ Սիրիան, հայտնի էր դեռ անցյալ տարվանից: Այս տարի արտաքին առեւտրում Մաքսային միության երկրների շոշափելի դրական սալդոյի մասին տեղեկությունները փորձագետների շրջանում քննարկվում են արտակարգ հետաքրքրությամբ: Այսպես, 2012 թ. Մաքսային միության անդամները արտահանել են 600 մլրդ դոլարի ապրանքներ եւ ներկրել են 339 մլրդ դոլարի: Ռուսաստանի դրական սալդոն կազմել է 192,1 մլրդ դոլար, Ղազախստանինը 158,6 մլրդ, իսկ Բելառուսինը՝ 10,2 մլրդ դոլար: Այն, որ Մաքսային միությունը զարգացման եւ բոլոր ցուցանիշներով առաջխաղացման միտում է դրսեւորում արդեն որերորդ տարին, լուրջ հետաքրքրության առարկա է դարձնում նրա հետ համագործակցելու հնարավորությունը: Հայաստանում, ինչպես եւ Ուկրաինայում, ինչպես եւ Ղրղզստանում, որոնց հարաբերությունները Մաքսային միության հետ ավելի կանոնակարգված են, մենք փորձելու ենք հասկանալ, թե ի՞նչ տնտեսական ակնկալիք կարող է ունենալ Մաքսային միության հետ մեր համագործակցության յուրաքանչյուր ձեւաչափը: Կրկնելով եվրասիական տնտեսական հանձնաժողովի նախարար Տատյանա Վալովայայի միտքը, մոսկվայաբնակ քաղաքագետ Անդրեյ Արեշեւը վերջերս հայտարարեց, որ Եվրասիական ինտեգրման պարագայում խոսքը միայն տնտեսական միության եւ ոչ թե քաղաքական միության մասին է: Այստեղից կարելի է ենթադրել, որ անցած ամիսների ընթացքում քննարկումները հետխորհրդային տարածքում հանգեցրին հետեւյալ ըմբռնումներին. 1. Մաքսային միության զարգացումը եւ Եվրասիական միության ձեւավորումը տնտեսական ներուժի համախմբման եւ տնտեսական միություն ստեղծելուն ուղղված քայլ են դառնում: Ինչպես եւ տեղի էր ունենում Եվրոպական միության ձեւավորման մի քանի տասնամյակների ընթացքում, տնտեսական դաշինքն է, որ պետք է պետությունների համար շահեկան դարձնի այլ ասպարեզներում, օրինակ՝ քաղաքական ասպարեզում ավելի սերտ համագործակցություն ծավալելու հարցը: Այժմեական քննարկումների հարցաշարից հանելով քաղաքական ինտեգրացիայի հարցը, այսօր մեծապես թեթեւացրել է ինտեգրացիոն գործընթացներին ավելի լիարժեքորեն մասնակցել ցանկացողների մտադրությունները: 2. Ընդգծելով ապագա դաշինքի տնտեսական բնույթը, Ռուսաստանը, Ղազախստանն ու Բելառուսը ընդգծում են տնտեսական հաշվարկների, տնտեսական ակնկալիքի գործոնները, փաստորեն ճանապարհ բացելով հաշվարկելու հնարավորությունների համար: Որովհետեւ եթե չկա քաղաքական պարտադրանք, կամ քաղաքական օր առաջ համախմբման հրամայական, ապա հաղթելու են տնտեսական օգուտի եւ շահի մասին ճշգրիտ հաշվարկները: Ուրեմն՝ Հայաստանում մոտակա ամիսներին անհրաժեշտ է միամյանցից անկախ առնվազն մի քանի հաշվարկ ունենալ, որոնք առարկայական կդարձնեն եվրասիական ինտեգրացիոն գործընթացին մասնակցելու լավագույն ձեւաչափի ընտրությունը:

## Քաղաքական նպատակահարմարության հարցը

Տնտեսական հաշվարկները այսպես թե այնպես հանգեցնում են քաղաքական մոտեցումներ որդեգրելու եւ քաղաքական որոշումներ կայացնելու հարցին: Օրինակ՝ «Ուկրաինսկի վիբոր» անկախ վերլուծական պորտալի ներկայացուցիչ Վլադիմիր Վոյուշը գտնում է, որ «(Ուկրաինայում) մի քանի տարվա ընթացքում որոշում չենք ընդունում տնտեսական ինտեգրացիայի վեկտորի կապակցությամբ, ամեն տարի փող ենք կորցնում»: Նա գտնում է, որ ուկրաինական «մտորումների» ամեն տարին երկրին արժենում է մոտ 10 մլրդ դոլար, կապված գազի բարձր գնի, մաքսային տուրքերի եւ ներքին համախառն արդյունքի կորուստների հետ: Հեռուստատեսությամբ շատերս ենք տեսել, թե ինչպես ՌԴ վարչապետ Մեդվեդեւը, անդրադառնալով Ուկրաինայի եւ Ղրղզստանի՝ Մաքսային միությանը ավելի սերտ մասնակցության հարցին, ասաց, որ ժամանակը անսպառ չէ, պետք է կայացնել որոշում, որովհետեւ այս ձեւաչափով հանդիպումը կարող է լինել վերջինը: Սա նշանակում է, որ իր կենսունակությունը արդեն ապացուցած Մաքսային միությունը շուտով կարող է եւ լուրջ պայմաններ կամ նախապայմաններ դնել նոր անդամագրվող թեկնածու երկրների համար: Հայտնի է, որ 2015 թ. հունվարի 1-ից ԵվրԱզԷՍ-ի բոլոր կառույցները անցնելու են Եվրասիական միությանը: Այս մասին համաձայնությունը ձեռք է բերվել Ռուսաստանի, Ղազախստանի եւ Բելառուսի նախագահների մակարդակով: Եվրասիական միության ստեղծման ճանապարհին կարեւոր նկատված ընկալումներից մեկն այն է, որ եվրասիական տարածքի պետությունները ուզում են լինել մի տնտեսական դաշինքի մեջ, որը լավագույնս կհաղթահարի ժամանակակից գլոբալ տնտեսության մարտահրավերներ: Քաղաքագիտական մտքի հաղթանակ կարելի է համարել այն դիտարկումը, որ այսօր աշխարհում շատերն են հասկանում, որ համաշխարհային տնտեսությունը բազմաբեւեռ աշխարհում իրենից ներկայացնելու է տարածաշրջանային տնտեսական (գուցե եւ՝ քաղաքական) ալյանսների ամբողջություն: Ռուսաստանը, իբրեւ նոր բազմաբեւեռ աշխարհակարգի ինքնուրույն ծանրության կենտրոններից մեկը, իրավունք ունի հավակնելու, որ այդ ալյանսներից մեկը ձեւավորվի իր շուրջը, մանավանդ որ Մաքսային միության գոյության առաջին տարիների շատ տպավորիչ տնտեսական արդյունքները իրավունք են տալիս նման հավակնությունների համար: Այսինքն, խոսքը ոչ թե Ռուսաստանից վախենալու արդյունքում նրան ենթարկվելու որոշման մասին է, ինչպես դա կարող են չարախոսել Ռուսաստանի աշխարհաքաղաքական հակառակորդները, այլ՝ ամուր տնտեսական շահերի ընդհանրության վրա կառուցված դաշինքի մասին: Տնտեսական ակնառու ցուցանիշների ազդեցության տակ շատ դժվար է Ռուսաստանին մեղադրել նոր Խորհրդային Միություն ստեղծելու կամ կայսրությունը վերականգնելու ձգտումների մեջ: Պարզ է, որ նման մեղադրանքները համոզիչ չեն լինելու, եթե Մաքսային միության գալիք տարիների ոգեւորիչ աճի ցուցանիշները շարունակեն բարձր մնալ:

Հայաստանի ներսում ֆունդամենտալ տնտեսագիտական հաշվարկներ կատարելու հետ միասին, մոտակա ամիսներին գծագրվում է եւս մի աշխատանքի ոլորտ: Դա հայ-վրացական համագործակցությանը այնպիսի թափ հաղորդելու խնդիրն է, որը կհանգեցնի ռուս-վրացական հարաբերությունների կարգավորմանը եւ աբխազական երկաթուղու վերաբացմանը: Եթե նույնիսկ ճշմարիտ են այն դատողությունները, ըստ որոնց աբխազական երկաթուղու վերաբացումը առանց Իրան-Հայաստան երկաթուղու շինարարության առանձնապես մեծ տնտեսական օգուտներ չի խոստանում Հայաստանին, ապա այդ վերաբացումը աշխարհայացքային մակարդակով Հայաստանը անվիճելիորեն կդարձնի էլ ավելի եվրասիական երկիր՝ կյանքի բոլորովին նոր մակարդակ եւ տեղաշարժման ավելի մատչելի հնարավորություններ ընձեռելով հայաստանցիներին: Իր երեւանյան այցի ընթացքում Վրաստանի վարչապետ Բիձինա Իվանիշվիլին նույնիսկ ակնարկ էր արել հայ-վրացական տնտեսական ինտեգրացիայի անհրաժեշտության մասին: Եթե հայ-վրացական տնտեսական ինտեգրացիայի մասին տեսական դատողությունները իրականություն դառնան, եւ ի չիք չլինեն Ադրբեջանի խանգարիչ դերի արդյունքում, եւ մյուս կողմից կարգավորվեն ռուս-վրացական հարաբերությունները (ինչի մասին խոսում ենք ոչ միայն մենք Հայաստանում, այլեւ բազմաթիվ վրացի քաղաքական-հասարակական գործիչներ), ապա մեր կտրվածությանը եվրասիական տարածքից կգա փոխարինելու այդ տարածքի լիարժեք եւ իրավահավասար տնտեսական սուբյեկտ դառնալու գիտակցությունը: Այս թեման ինքնուրույն խոսակցության նյութ է եւ արժանի է, որ քննարկվի ամենայն մանրամասնությամբ:

Վերադառնալով Մաքսային միության հետ ինտեգրացիոն գործընթացները խորացնելուն ուղղված փնտրտուքին եւ մասնավորապես տնտեսական նպատակահարմարության հաշվարկներին, մենք երբեք չպետք է մոռանանք, որ խոսքը մեր ռազմաքաղաքական դաշնակիցների հետ բազմաբնույթ համագործակցությունը կայուն պահելու եւ էլ ավելի խորացնելու գործընթացի մասին է: Եվ որ միայն թափանցիկ, հասկանալի եւ կանխատեսելի կեցվածքով կարելի է բարձր պահել հուսալի դաշնակցի եւ հավատարիմ բարեկամի ձեւավորված համբավը:

**ԱՐԱՄ ՍԱՖԱՐՅԱՆ**
Քաղաքական վերլուծաբան, բանասիրական գիտությունների թեկնածու

# Ադրբեջանում իշխող կուսակցությո՞ւն, թե՞ հատուկ ծառայությունների խոսափող

Արդեն մի քանի օր է, ինչ հարեւան երկրի քարոզչամեքենան վերստին շրջանառում է «Հայաստանի կողմից «սպիտակ մահ» արտահանելու» թեման: Ադրբեջանի ԱԱ նախարարությունը հայտնել է, որ «ձեռնարկված օպերատիվ միջոցառումների արդյունքում ձերբակալվել է Իրանի Իսլամական Հանրապետության քաղաքացիների մի խումբ, որն զբաղվում էր թմրանյութերի տարանցմամբ»:

Խնդիրը նոր չէ: Նախանցյալ տարի ԱՄՆ պետական դեպարտամենտը նույնիսկ հատուկ անդրադարձել էր Աֆղանստանից եւ Իրանից Ադրբեջանի տարածքով դեպի եվրոպական երկրներ թմրանյութի տարանցմանը եւ մասնավորապես ընդգծել դրանում ադրբեջանական սահմանապահ եւ մաքսային ծառայությունների «որոշակի շահագրգռվածությունը»: Այլ կերպ ասած, ամերիկյան կողմն ակնարկել էր, որ թմրանյութերն Ադրբեջան եւ այնտեղից Եվրոպա են տարանցվում ոչ առանց ադրբեջանական իշխանությունների իմացության:

Այդ պատասխանատվությունից խուսափելու համար Ադրբեջանի փոխվարչապետ, փախստականների եւ բռնատեղահանվածների հարցերով պետական կոմիտեի նախագահ եւ իշխող «Ենի Ազարբայջան» կուսակցության քաղխորհրդի անդամ Ալի Հասանովը պաշտոնապես հայտարարել էր, որ «թմրանյութեր Ադրբեջան տարանցվում են ինչպես Իրանից, այնպես էլ Լեռնային Ղարաբաղից»:

Մենք ժամանակին Հասանովի հայտարարության անհեթեթությունը հիմնավորել էինք եւ նկատել, որ «եթե Լեռնային Ղարաբաղից թմրանյութեր են տարանցվում Ադրբեջան, ուրեմն ադրբեջանական կողմը պիտի ընդունի, որ շփման գծի իր զորքերի հրամանատարությունը կոռումպացված է եւ դավաճան», քանի որ նա ասել էր, որ հայկական կողմը «դա անում է միտումնավոր, որպեսզի թուլացնի ադրբեջանական հասարակությանը, նրան վարակի թմրամոլությամբ»:

Թե ինչո՞ւ իշխող կուսակցության քաղխորհրդի անդամի վրա էր դրվել «հայկական սադրանքը բացահայտողի» դերակատարություն, պարզ է դառնում «Ենի Ազարբայջան»-ի երիտթեւի պատասխանատու Սարաֆ Բալախանի «մեկնաբանություններից», որ փոխանցել է day.az-ը (տես http://news.day.az/politics/408238.html): Երիտիլհամալիեւականը, խոսելով «Հայաստանի կողմից «սպիտակ մահ» արտահանելու փաստի անառարկելիությունից», կատարել է այսպիսի անդրադարձ. «Ուշադրություն դարձրեք ԱԱ նախարարության իրականացրած գործողությամբ ձերբակալված Իրանի քաղաքացու ցուցմունքին. «...չնայած այդ թմրանյութերն աճեցվել են Իրանի տարածքում, հաճախորդները հիմնականում նախապատվությունը տալիս են Ղարաբաղում աճեցված մարիխուանային»:

Այսպիսով, երիտիլհամալիեւականի ձեռքի տակ է ԱԱ նախարարության կողմից ձերբակալված ԻԻՀ քաղաքացու «ցուցմունքը», փաստ, որ ինքնին հարց է ծնում՝ որքանո՞վ է օրինական, երբ նախաքննության փուլում գտնվող գործի մանրամասնությունները դառնում են իշխող կուսակցության երիտթեւի պատասխանատուի տրամադրության տակ: Մի՞թե նա «համատեղության կարգով» նաեւ ԱԱ նախարարության աշխատակից է կամ արդյոք ադրբեջանական հատուկ ծառայությունները չե՞ն «Ենի Ազարբայջան»-ի փաստացի ղեկավարները՝ նկատի ունենալով, որ այդ կուսակցության հիմնադիր Հեյդար Ալիեւը ՊԱԿ-ի գեներալ էր:

Բայց առավել հետաքրքրական է ԻԻՀ անանուն «քաղաքացու ցուցմունքի» հետեւյալ ձեւակերպումը՝ «չնայած այդ (Ադրբեջանի ԱԱ նախարարության կողմից իր մոտ հայտնաբերված- Վ. Ա.) թմրանյութերն աճեցվել են Իրանի տարածքում, հաճախորդները հիմնականում նախապատվությունը տալիս են Ղարաբաղում աճեցված մարիխուանային»: ԻԻՀ «քաղաքացին», ուրեմն, խոստովանել է, որ իրենից առգրավված թմրանյութերն «աճեցվել են Իրանի տարածքում»: Շարունակությունն ադրբեջանական հատուկ ծառայությունների հերյուրանքն է՝ «...բայց հաճախորդները հիմնականում նախապատվությունը տալիս են Ղարաբաղում աճեցված մարիխուանային»:

Սա չափազանց էժանագին քարոզչահնարանք է, որին հարեւան երկրի հատուկ ծառայությունները դիմել են զուտ քաղաքական նկատառումներով: Եվ երիտիլհամալիեւականի բարբաջանքները, որ «նախագահը (Իլհամ Ալիեւը- Վ. Ա.) միջազգային ամենահեղինակավոր ամբիոններից ուշադրություն է հրավիրել Հայաստանի կողմից «սպիտակ մահ» արտահանելու փաստերի վրա», այլ բան չէ, քան ԱԱ նախարարության՝ սեւով սպիտակի վրա կարված «վարկածի հիմնավորման» անհույս ճիգ:

Հակահայկական ձեռնարկումներում, կարող ենք ամփոփել, Ադրբեջանի քաղաքական ղեկավարությունը, հատուկ ծառայությունները, բանկը եւ լրատվական դաշտը միմյանց արժանի են իրենց անարժեքությամբ, մտավոր հետամնացությամբ եւ պրոֆեսիոնալ անձեռնհասությամբ: Այլապես իշխող կուսակցության երիտթեւի պատասխանատուին չէին պարտադրի հրապարակայնացնել ԱԱ նախարարության «հատուկ օպերացիայի» ողջ սնանկությունը:

**ՎԱՀՐԱՄ ԱԹԱՆԵՍՅԱՆ**

# Իրանում նախագահական ընտրություններ են

*1-ին էջից*

Թեեւ պարսիկ հաղորդավարը արժանի պատասխան ստացավ, սակայն Թեհրանի հեռուստատեսությունը պետական է, հետեւաբար դրա էկրանից չի կարող հնչել այլ կարծիք, քան պաշտոնականը: Ըստ երեւույթին իրանական կողմը դժվարանում է ըմբռնել այն դրական դերը, որը Հարավային Կովկասում Իրանի համար կատարում է հայկական գործոնը: Այլ կերպ, եթե Հայաստանը որդեգրեր այն դիրքորոշումը, ինչ Ադրբեջանը, ապա Իրանի Իսլամական Հանրապետությունը ոչ միայն ներկայություն չէր ունենա Հարավային Կովկասում, այլեւ չէր էլ կարող երազել ունենալու մասին:

Ի տարբերություն Հայաստանի՝ Ադրբեջանն էլ Հարավային Կովկասում ներկայություն է ապահովում Իսրայելի համար, ընդ որում, քաղաքականի հետ նաեւ ռազմական, տրամադրելով իսրայելական զինված ուժերին ռազմաբազաներ իրանական սահմանի երկայնքով: Ինչպես երեւում է, Ադրբեջանի պարագայում խնդիրը սոսկ Իսրայելին Հարավային Կովկաս հրավիրելը չէ, այլ հակաիրանական ձեռնարկումները Իրանի հետ մերձեցման միտումներին համադրելն ու համադրության ադրբեջանական ջանքերին իրանական կողմի դրական արձագանքը:

Հատկանշական է, որ այս հանգամանքը գրավել է «Դունիա բուլթենի» լրատվական գործակալության ուշադրությունը, որն էլ երեկ հրապարակել է «Մերձեցում Ադրբեջանի ու Իրանի միջեւ» վերնագրով հոդվածը: Նախքան դրա բովանդակությանն անդրադառնալը հարկ է նշել, որ թուրքական այս գործակալությունը իսլամական ուղղվածություն ունի:

Հոդվածում նշվում է Կովկասի մահմեդականների հոգեւոր առաջնորդ Ալլաշուքյուր Փաշազադեի Իրան այցելության մասին, որին նախորդել էր Ադրբեջանի վարչապետի աշխատակազմի ղեկավար Ռամիլ Մեհդիեւի այցը, եւ այցերը վերագրվում են արտերկրում աջակցություն որոնելու Ալիեւի իշխանությունների ջանքերին:

«Դունիա բուլթենի» կայքէջի տվյալներով՝ Փաշազադեն եղել է Իրանի հոգեւոր կենտրոն Ղոմ քաղաքում, հանդիպել այաթոլլահ Նասեր Մաքարեմ Շիրազիի հետ, որը Կովկասի հոգեւոր առաջնորդին հորդորել է պահանջել Իլհամ Ալիեւից, որ ազատ արձակի ձերբակալված կրոնասերներին:

Այնուհետեւ թուրքական կայքէջը շարունակում է. «Երբ Ադրբեջանում փորձ էր արվում արգելել գլխաշորը, փակել հոգեւոր կրթօջախներն ու քանդել նորակառույց մզկիթները, այաթոլլահ Շիրազին հանդես եկավ եւ սպառնաց, որ «Զահրա» մզկիթի փլուզումը շարունակելու դեպքում «ջիհադ» կհայտարարի: Նրա խոսքերը տեղ էին հասել, որ դրանց հիման վրա Ալիեւի հատուկ կարգադրությամբ դադարեցվեց մզկիթների քանդումը, իսկ «Զահրա» մզկիթը վերանորոգվեց պետական միջոցներով:

Անկախության ձեռքբերումից հետո Ադրբեջանը սերտ հարաբերություններ էր հաստատել Իրանի հոգեւորականների հետ, որոնք սկսել էին կրոնական ուսուցում տալ ադրբեջանական տարբեր քաղաքներում: Միաժամանակ ադրբեջանցի ուսանողները մեկնում էին Իրան, մեդրեսաներում սովորելու համար: Սակայն մի քանի տարի հետո իրադրությունն Ադրբեջանում փոխվեց: Երկրից վտարվեցին իրանցի հոգեւորականները, իսկ Իրանում հոգեւոր կրթություն ստացած ադրբեջանցիները ենթարկվեցին հալածանքների: Ներկա պահին Ադրբեջանում արգելված է իրանցի հոգեւորականների գործունեությունը: Ավելին, Ալիեւի իշխանությունները արգելել են նաեւ արտերկրում կրոնական կրթություն ստանալն ու բազմիցս հայտարարել են, որ չեն վերանայելու այդ արգելքը»:



# ԱՄՆ-ում սպիտակամորթների մահացությունն արդեն գերազանցում է ծնունդներին



**ԱՄՆ սպիտակամորթ բնակչության մահացության մակարդակն անցյալ տարի առաջին անգամ գերազանցել ծնունդների ցուցանիշը, գրում է «Վաշինգտոն փոստ» թերթը, վկայակոչելով Մարդահամարի բյուրոյի տվյալները:**

**Վերջիններիս համաձայն, Միացյալ Նահանգներում ապրում է լատինամերիկյան ծագում չունեցող 198 մլն սպիտակամորթ: Անցյալ տարի այդ խմբում մահացած անձանց թիվը 12,4 հազարով գերազանցել է ծնունդների թիվը:**

**Դեռ վերջերս՝ 2010-2011 թթ., սպիտակամորթների շրջանում ծնունդների թիվը 29,6 հազարով գերազանցում էր մահացությանը, նշում է USA Today թերթը: Ժողովրդագիրները հավաստում են, որ ԱՄՆ-ի պատմության մեջ երբեք նման բան չէր եղել, նույնիսկ՝ մեծ լճացման տարիներին:**

**Փորձագետները ծնելիության անկումը բացատրում են ժողովրդագրական եւ տնտեսական գործոններով, որոնք արդեն 2007-ին ԱՄՆ-ում սկսել էին ազդել ժողովրդագրական պրոցեսների վրա:**

**Այդ գործոնների պատճառով սպիտակամորթների ընտանիքում ներկայումս ծնվող երեխաների թիվը ցածր է այն մակարդակից, որը կկարողանար ապահովել կայուն թվաքանակ: Փորձագետները նշում են, որ բնակչության մյուս խմբերում նման անկում չի նկատվում:**

**Սպիտակամորթ ամերիկացիների միջին տարիքը զգալիորեն բարձր է մյուս խմբերի տարիքից: «Վաշինգտոն փոստի» տվյալներով, սպիտակամորթների միջին տարիքը 42 է, ասիացիներինը՝ 34, աֆրոամերիկացիներինը՝ 32, լատինամերիկացիներինը՝ 28:**

**Ոչ իսպանախոս սպիտակամորթներն ԱՄՆ-ում առայժմ մեծամասնություն են կազմում՝ 63 տոկոս: Ծնելիության անկումը մասամբ փոխհատուցում են 188 հազար սպիտակամորթ ներգաղթյալները (Կանադայից, Գերմանիայից, ինչպես նաեւ Ռուսաստանից եւ Սաուդյան Արաբիայից):**

**Այդուհանդերձ նկատվող միտումները դառնում են տագնապալի: Այս տարի ավելի վաղ հրապարակված մարդահամարի տվյալները ցույց են տվել, որ, ԱՄՆ-ի պատմության մեջ առաջին անգամ, սպիտակամորթ երեխաները դարձել են փոքրամասնություն:**

**«Մենք թեւակոխում ենք մեր սպիտակամորթ բնակչության թվի դանդաղ կրճատման երկարատեւ փուլ, որը բնորոշ կլինի ընթացիկ հարյուրամյակին», ասում է Բրուքլինյան ինստիտուտի փորձագետ-ժողովրդագիր Ուիլյամ Ֆրեյը:**

**Պ. Ք.**

# ԿՀՎ փոխտնօրենը հրաժարական տվեց

*Նրա հաջորդը կին է*



**ԿՀՎ փոխտնօրեն Մայքլ Մորելը հրաժարական է տվել, հաղորդում է Ասոշիեյթեդ պրես գործակալությունը: Նա ԿՀՎ-ում աշխատում էր 1980-ից, իսկ փոխտնօրենի պաշտոնը զբաղեցնում էր վերջին երեք տարիներին: 2012-ի նոյեմբերից մինչեւ 2013-ի մարտ ամիսը նա ժամանակավորապես կատարում էր ԿՀՎ տնօրենի պարտականությունները, որի պաշտոնը թափուր էր գեներալ Դեւիդ Պետրեուսի հրաժարականից հետո:**

**Սպիտակ տանը ԶԼՄ-ներին հայտնել են, որ ԿՀՎ փոխտնօրենի պաշտոնում արդեն նշանակվել է կին իրավահաջորդ: Խոսքը Ավրիլ Հեյնսի մասին է, որն անցյալում աշխատել է որպես Ազգային անվտանգության գործակալության իրավախորհրդասու:**

**Մորելի հրաժարականի պաշտոնական պատճառները չեն նշվում: Մինչդեռ ակնհայտ է, որ նրա պաշտոնաթողությունը տեղի ունեցավ ամերիկյան հատուկ ծառայությունների գաղտնալսումների ծրագրին վերաբերող տեղեկությունների հրապարակումից հետո պայթած սկանդալի պայմաններում:**

**Ասոշիեյթեդ պրեսը նշում է, որ Մորելը հետեւողականորեն հանդես էր գալիս քաղաքացիների մասնավոր կյանքին ԿՀՎ միջամտության հնարավորության պաշտպանությամբ՝ ընդգծելով, որ նման գործողությունները հատուկ ծառայություններին թույլ են տալիս ստանալ օգտակար տեղեկություններ:**

ՊԷՅՐՈՒԹ

## Հ.Բ.Ը.Մ.-Հ.Ե.Ը.ի «Արին» պարախումբին փառաւոր նուէրը Լիբանանի հայութեան



Լիբանանի արուեստասէր ընտրանին, պետական, խորհրդարանային եւ դիւանագիտական շրջանակներու ներկայացուցիչներ, դեսպանին գլխաւորութեամբ՝ Մայր հայրենիքի դեսպանութեան ամբողջ անձնակազմը, ազգային եւ մշակութային հանրայայտ գործիչներ, հայ երաժշտութեան եւ պարարուեստի նուիրեալներ հաւաքուած էին վերջերս Էմիլ Լահուդի անուան հանդիսասրահը՝ Հ.Բ.Ը.Մ.-Հ.Ե.Ը. «Արին» պարախումբի «Լեռներու կանչը» խորագրեալ փառաւո՛ր ներկայացում-համերգին համար, որ հիացմունքի եւ գնահատանքի որոտընդոստ ծափեր խլեց ծայրէ-ծայր լեցուն հսկայական դահլիճէն...:

Արցախի ազատագրութեան պայքարին մասնակից եւ հերոս, պարուսոյց-պարահաւաք Գագիկ Գինոսեան եւ տաղանդաշատ արուեստագիտուհի Գայիանէ Մածունեան կարողացած էին կարճ ժամանակի մէջ սիրողական մակարդակէն անցնիլ արհեստավարժութեան դժուարին ճանապարհը, երիտասարդ-երիտասարդուհիներէ, պատանիներէ եւ մանուկներէ կազմուած այս մեծ պարախումբը պատրաստելու համար նուաճումի մը, որուն ականատես եղան խստապահանջ բոլոր ներկաները:

Համերգ-ներկայացման առաջին մասը հայ ազգագրական եւ ազգային պարերն էին, որոնք դարեր շարունակ գոյութիւն ունեցած են Արեւմտեան Հայաստանի, Ջաւախքի եւ Արեւելեան Հայաստանի, Արցախի մէջ՝ զարդարելով հարսանիքները, տօնախմբութիւնները, յաղթական ճակատամարտերը...: «Եարխուշտա», «Սղերդի քոչարի», «Շատախի ռազմապար», «Փափուռի» եւ այլ խմբապարեր, որոնք հիանալիօրէն ներկայացուեցան «Արին» պարախումբի բազմազան տարիքներու մէջ ծաղկող՝ խոստմնալից արուեստագէտ-արուեստագիտուհիներուն կողմէ:

Գայիանէ Մածունեան Գագիկ Գինոսեան Արամ Խաչատուրեան

Ընդմիջումէն ետք հանդիսականներուն վերապահուած էր փառաշուք «նուէր»-անակնկալ մը՝ հայ դասական երաժշտութեան տիտան՝ Արամ Խաչատուրեանի ծննդեան 110-ամեակին առթիւ, երաժշտութեան եւ պարի, խորհրդային Հայաստանի պանծալի թէ տխուր տարիները՝ տեսահոլովակի ցուցադրութեամբ տողանցեցին բեմին վրայ՝ հիացմունքի եւ փոթորկալից ծափահարութեան ալիքներ խլելով ներկաներէն: Ապա ծնունդ առին, եւ մեր բոլորին առջեւ «Արին»ի պատանի ու երիտասարդ «աստղ»երուն կողմէ հրամցուեցան «Աստղի մը ծնունդը» («Գայիանէ» պալէ 1942թ.), «Աշխատանքի Արշալոյսին» (1935թ.), ապա եւ ցնցիչ «Սուրճ եւ մանգաղ»ը, «Հոկտեմբերիկները» եւ թատերականացած այլ ուրախ պարային տեսարաններ:

Ներկայացուեցաւ նաեւ Նինա Մաքարովան, Արամ Խաչատուրեանի երաժշտագէտ տիկինը, իր գլխաւոր ներդրումը՝ նուաճումներու թէ «անձի պաշտամունքի» դժուարին օրերուն՝ «Հարսանեկան պար»ով:

Յաջորդեց Հայրենական մեծ պատերազմը, մահ եւ աւեր, քարուքանդ երկիր ու բիւրաւոր նահատակներ: Սակայն, այդ դժոխային օրերուն իսկ, Արամ Խաչատուրեան եւ իր «գործընկերները» շարունակեցին ստեղծագործել, ոգեշնչելով նացիստական ազգայնամոլներու դէմ հայ թէ խորհրդային զինուորներու ահեղ պայքարը, որ 1945 թ.ին պսակուեցաւ յաղթանակով: «Մեծ օրեր», «Պայքար», «Զնծաղիկներ», «Յաղթանակի օր», «Յարգանք» եւ այլ խմբապարերով, որոնք իրենց գագաթնակէտին կը հասնին «Յաղթական սլացք»ով, «Սպարտակ» ազատութեան թռիչքներով եւ «Սուրերու պար»ով, որոնք համաշխարհային հռչակ բերին հայ մեծանուն կոմպոզիտորին՝ մեր երկրագունդի չորս ծագերուն:

Անմոռանալի համերգի աւարտին, Հ.Ե.Ը.ի Շրջանակային վարչութեան ատենապետ Վիգէն Չերչեան շնորհակալական խօսքով հանդէս եկաւ ու պարգեւատրեց ինչպէս պարուսոյցներ Գագիկ Գինոսեանն ու Գայիանէ Մածունեանը, այնպէս ալ Հ.Ե.Ը.ի պարախումբի ժրաջան վարչութիւնը՝ այս հսկայական աշխատանքին համար, գլխաւորութեամբ ատենապետ տիկ. Անի Պոտրումեանի: Երաժշտութեան եւ պարի «փառատօն»ին մասնակիցները լաւագոյն տպաւորութիւններով ակամայ բաժնուեցան դարձեալ հանդիպելու մեծ ցանկութեամբ:

ՀԱՄՕ ՄՈՍԿՈՖԵԱՆ

# Փառավոր է հայ տպագրությունը

Մշակույթի նախարարության հովանու ներքո բացառիկ այս երկու իրադարձությունները երկու հանգով փառավորվեցին Հայաստանում եւ մեր գաղթօջախներում:

Բեյրութի Հայկազյան համալսարանը, օրինակ՝ չորս անգամ, ի պատիվ իրեն ու բոլորիս, անդրադարձավ այդ իրադարձություններին, վերջինը՝ մարտի 22-ին:

Բազմաթիվ ու լայնածավալ միջոցառումների վերաբերյալ նյութերով բազմաթիվ հրապարակումներով առանձնացավ **«Ազգ»** օրաթերթը:

Պարզապես զարմանալի է, որ մեր Մշակույթի նախարարությունում ցայսօր գոյություն չունի սփյուռքահայ ու հայաստանյան տպագրության եւ մամուլին աջակից կառույց:

Ժամանակին սփյուռքահայության հետ մշակութային կապի կոմիտեում ստեղծվել էր համանման բաժին (Գեւորգ Աբաջյանի ղեկավարությամբ), որը կազմակերպում էր հայ մամուլի եւ նրա չարքաշ մշակների համակողմանի ու ծավալուն աջակցությունը, ինչպես նաեւ այդ աշխատանքներին նվիրված համահայկական գիտաժողովներ:

Բացի այդ, սփյուռքահայ թերթերն ու հանդեսներն անհատույց ապահովվում էին հայրենական՝ կրթական, գիտական ու մշակութային հարցերին նվիրված բազմաբովանդակ նյութերով, որ առաքվում էին հեռատիպով՝ տելետայպով:

Այդ բաժնի կարեւոր ձեռնարկումներից էին հայոց լեզվով, մասամբ նաեւ օտարալեզու, սփյուռքահայ թերթերի ու հանդեսների բաժանորդագրությունը համամիութենական՝ մամուլի տարածման «Սոյուզպեչատ» կոչված գործակալության միջոցով: Հայաստանում, նաեւ Խորհրդային Միության կենտրոնական որոշ քաղաքներում՝ աչքի զարնող որոշ թերթ-կրպակներում, ինչպես նաեւ Մոսկվայի «Դրուժբա» գրքի հանրախանութում մշտապես կարելի էր գտնել սփյուռքահայ՝ հայերեն, անգլերեն, ֆրանսերեն, բուլղարերեն-հայերեն, ռումիներեն-հայերեն, թերթեր ու հանդեսներ:

Այստեղ հիրավի հպարտության զգացումով էինք համակվում:

Շնորհիվ այդ ամենի, մեր, այսպես կոչված, բարեկամական գաղափարախոսությամբ օժտված մամուլը Հայաստանի պահուստային ֆոնդից փոխարժեքով ստանում էր պատկառելի գումար, որոնց շարքում առաջին հերթին բաժին էր հասնում առաջադիմական կոչված, բայց ըստ էության կոմունիստական «Լրաբեր» (Նյու-Յորք), «Աշխարհ» (Փարիզ) եւ Բեյրութի «Կանչ» թերթերին:

Ինչեւէ...

Ինչպես հայտնի է հայ գրքի մայրաքաղաքային ու 500-ամյա հոբելյանականին նվիրված բազմաթիվ հանդիսություններ են կազմակերպվել նաեւ արտերկրում, որոնց շրջանակներում ցանկալի եւ կարեւոր կլիներ ներառել Հայաստանի ազգային փոքրամասնությունների մշակույթը՝ տվյալ ոլորտում: Այս պարագայում առաջին հերթին կներառնվեր եզդիների՝ Հայաստանում ստեղծված քրդական գրականությունը, գիտական աշխատությունները, բանահյուսությունը, «Սիամանթո եւ Խջեզարե» սիրավեպը (բանահյուսական այդ կոթողը ժամանակի վայրիվերումների փորձությամբ կորուսյան դատապարտված, փրկել, գրի էր առել ու մեզ հասցրել մեծն Գարեգին Սրվանձտյանցը), որ բազմիցս տպագրվել է նաեւ հայատառ քրդերենով, բառարաններ, «Դենգե եզդիյա» (Եզդիների ձայն) թերթը եւ այլն:

Այս ամենին կարելի կլիներ հավելել՝ ներառելով նաեւ ադրբեջանականը: Ցուցադրությանը կներկայացվեին Երեւանում տպագրված նրանց գրականությունը, ադրբեջաներեն-հայերեն բառարանը, դասագրքեր՝ Հայաստանի ադրբեջանական դպրոցների հայոց լեզվի, գրականության, հայ ժողովրդի պատմության եւ այլ դասագրքեր:

Այս ամենի ուղղվածությունը՝ նպատակը, պետք է լիներ ադրբեջանական գրա-տպագրական մանկահասակ «մշակույթը» եւ ընդգծումը՝ նրանց ունեցած-չունեցած այբուբենները ողջ 20-րդ դարի ընթացքում, առաջինը խորհրդային-կոմունիստականն է՝ ռուսական «կիրիլիցայի» կերպարանքով, երկրորդը՝ հետխորհրդային՝ լատինատառ:

Պատճառորեն ներկայացվող մեր հարեւանների նորընծա մշակութային ժառանգությունը՝ հնատիպ՝ հնադարյան մեր գրքերի կողքին, չափից ավելի խոսուն կլիներ:

Այս ամենն անվերադարձ անցան-գնացին, սակայն, հուրախություն, նոր առիթ է ներկայանում:

Նախ եւ առաջ պետք է փառավորվեր հայ տպագրությունը եւ հետո միայն նրանից ծնունդ առած հայ գիրքը, կամ էլ երկուսը միաժամանակ:

2012 թիվը նշանակալի իրադարձությունների տարի էր հայաստանյան, ինչպես նաեւ համահայկական մշակութային կյանքում:

Փառավորվեցին, անցան-գնացին, հայ գրքի 500-ամյակը եւ Երեւանը որպես գրքի համաշխարհային մայրաքաղաք, միջոցառումները:

Եթե չվարանենք ու պահն օգտագործենք ըստ ամենայնի, կունենանք հրաշալի արդյունք:

Խոսքը վերաբերվում է այս տարվա ստամբուլյան՝ քաղաքակրթությունների երկխոսությանը, որի շրջանակներում այդ ոչ-թուրքական քաղաքը հռչակվել է մշակույթի համաշխարհային մայրաքաղաք:

Կկամենա՞նք կամ քաջություն կունենա՞նք այնտեղ տեղի ունենալիք բազմաթիվ ու բազմազան ցուցահանդես-միջոցառումներին պատշաճ մակարդակով ներկայացնելու ոչ միայն մեր մշակույթը, այլեւ եզդիականն ու ադրբեջանականը, հավելելով թուրքականը, որը բավականին նյութառատ է:

Ի դեպ, եզդիականի վերաբերյալ առաջարկվելիք նյութերն ի վիճակի է հրաշալիորեն պատրաստել ու առաջիկա այդ միջոցառումների շրջանակներում ներկայացնել Հայաստանի եզդիական համայնքը, եւ եզդիների՝ Հայաստանի ու համաշխարհային միության նախագահ, հերոս Ազիզ Թամոյանը:

Մշակույթի նախարարությանը բնավ անելիք չի մնա:

Արդեն ժամանակն է պոլսեցիներին հիշեցնելու, որ անցած դարասկզբին տասնյակ ու տասնյակ հայ գրողներ՝ հայատառ թուրքերենով ստեղծել են մեծ գրականություն: Հիշարժան է, օրինակ՝ անհայտ՝ անանուն հայ գրողի «Ագապի Հեքիայեսի» վիպակը, եվրոպական դասականների հայատառ թուրքերենով թարգմանությունները եւ այլն:

Սա սոսկ առաջարկություն է եւ մնում է հուսալ ու սպասել արհեստավարժ մեր գործիչների այս առթիվ կատարվելիք գործողություններին:

Ասված վկա, այս առիթն իրավունք չունենք անտեսելու:

ԱՐԹՈՒՐ ՆԱՎԱՍԱՐԴՅԱՆ

## «Փասիանի որսորդը» ընդգրկվել է Մոսկվայի կինոփառատոնի ծրագրում

Ռեժիսոր Մարինե Զաքարյանի՝ Վիլյամ Սարոյանի համանուն պատմվածքի մոտիվներով նկարահանած «Փասիանի որսորդը» ֆիլմն ընդգրկվել է Մոսկվայի 35րդ միջազգային կինոփառատոնի կարճամետրաժ ֆիլմերի մրցույթում: Կինոփառատոնն անց է կացվելու հունիսի 20-ից 29-ը: Փառատոնի գլխավոր եւ կարճամետրաժ ֆիլմերի ժյուրին գլխավորելու է իրանցի հայտնի կինոռեժիսոր, սցենարիստ, պրոդյուսեր Մոհսեն Մախմալբաֆը: Փառատոնի գլխավոր մրցույթում «Սուրբ Գեորգի» մրցանակի համար պայքարելու են 16 ֆիլմեր: Կարճամետրաժ ֆիլմերի մրցույթում ընտրված ֆիլմերը յոթն են: Մրցույթը բացվելու է ռեժիսոր Մարկ Ֆորստերի «World War Z» ֆիլմով, որի գլխավոր դերակատարը Բրեդ Փիթն է:

«Փասիանի որսորդը» Մարինե Զաքարյանի առաջին ֆիլմն է: Այն նկարահանվել է Հայաստանի ազգային կինոկենտրոնի դեբյուտային ֆիլմերի աջակցության ծրագրով, սեղմ ժամկետներում եւ սահմանափակ տեխնիկական միջոցներով: Ֆիլմն աչքի է ընկնում դասական գրողի հանդեպ հոգատարության ու ինքնուրույն մեկնաբանության համադրմամբ, ինչպես նաեւ թվային տեխնոլոգիաների համարձակ կիրառմամբ: 2013թ. ապրիլին «Փասիանի որսորդը» ստացել է ազգային կինոյի «Հայակ» մրցանակը՝ Լավագույն դեբյուտ անվանակարգում:

*Արմենպրես*

## Մարդինի Սբ Գեւորգ հայկական եկեղեցին ճանաչվել է Եվրոպայի առավել վտանգված 7 հուշարձաններից մեկը

Հունիսի 12 ին Աթենքում «Եվրոպա Նոստրա» կազմակերպության 50 ամյակին նվիրված հոբելյանական կոնգրեսի նախօրեին հրավիրված մամուլի ասուլիսի ժամանակ հրապարակվել է Եվրոպայի առավել վտանգված հուշարձանների յոթնյակը: Այն ընդգրկում է մշակութային ժառանգության օրինակներ Ալբանիայից, Կիպրոսից, Ֆրանսիայից, Պորտուգալիայից, Իտալիայից, Ռումինիայից եւ Թուրքիայից:

«Եվրոպա Նոստրայի» տարածած մամուլի հաղորդագրության մեջ մասնավորապես ասված է. «Եվրոպայի մշակութային եւ բնության ժառանգության այդ գանձերը սպառնալից վիճակում են հայտնվել անհրաժեշտ ֆոնդերի կամ փորձաքննության բացակայության, վատ պլանավորման, անփութության, բնական աղետների եւ կամ քաղաքական կոնֆլիկտների հետեւանքով»:

Եվրոպայի առավել վտանգված 7 հուշարձանների յոթնյակում է նաեւ Մարդինի (Արեւմտյան Հայաստան, Դիարբեքիրի վիլայեթ, այժմ՝ Մարդինի վիլայեթի վարչական կենտրոնը) Սբ Գեւորգ հայկական եկեղեցին՝ ներկայացված Թուրքիայի կողմից:

«Շուրջ 15 դար Սբ Գեւորգ եկեղեցին Մարդին քաղաքի մեծ հայ համայնքի հոգեւոր օջախն է հանդիսացել: Պատմական հուշարձան դասակարգված այս շինությունը կառուցվել է 420թ. եւ օգտագործվել է հայ բնակչության կողմից մինչեւ 1915 թ.: Միաժամանակ նշվում է, որ հուշարձանը փրկելու մտահոգությունը «Եվրոպա Նոստրային» է ներկայացրել Թուրքիայի նույնանուն կազմակերպությունը՝ Մարդինի կաթոլիկ հայ համայնքի հիմնադրամի աջակցությամբ:

*Նոյյան տապան*

ԱԶԳ

# Մարզական

# Ռուբեն Հայրապետյան. «Ֆուտբոլիստին կարող եմ պատժել, բայց մարզիչների գործին չեմ խառնվում»

Ֆուտբոլի ֆեդերացիայում երեկ կայացած մամուլի ասուլիսում ՀՖՖ նախագահ **Ռուբեն Հայրապետյանն** անդրադարձավ Հայաստանի ազգային հավաքականին առնչվող մի շարք հարցերի: Մալթայի հավաքականից կրած պարտության հիմնական պատճառը նա համարեց ֆուտբոլիստների ոչ այնքան լուրջ մոտեցումը հանդիպմանը, մրցակցին թերագնահատելը: Ըստ ՀՖՖ նախագահի, ֆուտբոլիստներից ոմանք մեծամտացել են, իրենց երկնքում են զգում: Վերջիններիս հարկավոր է երկիր իջեցնել: Յուրա Մովսիսյանին հավաքականի մեկնարկային կազմում չընդգրկելը Հայրապետյանը բացատրեց այն փաստով, որ նա ԱՄՆ-ից Հայաստան հոգնատանջ ճանապարհ էր անցել, ֆունկցիոնալ վիճակն էլ բավարար չէր: Բացի այդ, ՀՖՖ նախագահը Յուրային պատժել էր հավաքին մեկ օր ուշացումով ներկայանալու համար եւ մեկ օրով հեռացրել էր հավաքականից: Սակայն Յուրան ընդունել էր իր սխալն ու խնդրել էր գլխավոր մարզչին կրկին թույլատրել մասնակցելու հավաքին: Եվ Մովսիսյանն արդարացրեց իրեն՝ դառնալով 2 գոլի հեղինակ:




ՀՖՖ նախագահի կարծիքով, դանիացիների հետ խաղում մեր ֆուտբոլիստներն արեցին այն, ինչը պարտավոր էին անել, ցույց տվեցին, որ կարող են լավ ֆուտբոլ ցուցադրել: Իհարկե, հաճելի է, որ լավ խաղացին ու հաղթեցին, սակայն դա չպետք է հերոսություն համարել:

Ռուբեն Հայրապետյանը համաձայն է Վարդան Մինասյանի հետ, որ մնացած 4 խաղերում հաղթելու դեպքում հնարավոր է եզրափակիչի ուղեգրի համար պայքարել, քանի որ մեր հավաքականը մեծ ներուժ ունի: Նա դանիացիների հետ խաղում պաշտպաններից առանձնացրեց Վարազդատ Հարոյանին, որն օդային մենամարտերում հաղթող էր դուրս գալիս իրենից բարձրահասակ ֆուտբոլիստների հետ պայքարում:

Մալթայի հավաքականի հետ հանդիպումից հետո ֆուտբոլասերների մոտ դժգոհության մեծ ալիք էր բարձրացել, շատերը վիրավորել ու պահանջել էին Ռուբեն Հայրապետյանի հրաժարականը: Այս առնչությամբ ՀՖՖ նախագահը հետեւյալը նշեց. «Եթե հանրությունը պահանջի իմ հրաժարականը, ապա պատրաստ եմ դա անել: Ինձ մեղադրում են Մալթայի խաղը վաճառելու, Մխիթարյանի տրանսֆերի մեջ մաս ունենալու, մարզիչների գործունեությանը խառնվելու, հավաքականի կազմը որոշելու մեջ: Նման բան չկա: Եթե խնդիրներ կան, ապա պատրաստ եմ քննարկելու, լսելու առաջարկները: Ես կարող եմ պատժել ֆուտբոլիստին՝ մարզչին ասելով, որ կազմում չընդգրկի, սակայն երբեք իմ ցուցումով հավաքականի մարզիչը չի որոշում կազմը: Իհարկե, խաղից հետո որպես ՀՖՖ նախագահ, ճշտապես իմ կարծիքն եմ հայտնում Վարդան Մինասյանին, նրա հետ քննարկում ենք դաշտում ծավալված իրադարձությունները: Դանիայի հետ խաղից հետո էլ հայտնել եմ կարծիքս, չէ՞ որ հայկական ֆուտբոլի թիվ 1 պատասխանատուն եմ:

Հավաքականի նախկին մարզիչ Յան Պոուլսենը հայտարարել է, թե ես ճշտապես խառնվում էի իր գործերին կազմն ընտրելու հարցում, դրա համար էլ հեռացրել եմ աշխատանքից: Նա ստախոս է: Խաղից հետո նրան ասել էի, թե ինչո՞ւ է վնասվածք ունեցող Արթուր Ոսկանյանին խաղացրել: Ասել էր, որ ֆուտբոլիստն իրեն վստահեցրել էր, թե կարող է խաղալ: Ես էլ նրան հեռացրեցի աշխատանքից: Ընդհանրապես Պոուլսենը թույլ մարդ էր, իմ սխալն է եղել նրան հավաքականի ղեկը հանձնելը»:

Ռուբեն Հայրապետյանը նույնիսկ չցանկացավ լսել Դենիս Թումասյանին հավաքական հրավիրելու առաջարկի մասին հարցը, որը բազմիցս է հնչել: Ըստ նրա, Թումասյանը թույլ ֆուտբոլիստ է: Իսկ Արտյոմ Խաչատուրովի մասին ասաց, որ նա այս պահին դեռ լիովին պատրաստ չէ հավաքականում խաղալու, սակայն ապագայում կարող է իր տեղն ունենալ կազմում: ՀՖՖ նախագահը նշեց, որ աշխատանք է տարվում հավաքականի թեկնածուների ցանկն ընդլայնելու, որպեսզի ֆուտբոլիստների վնասվածքներն ու որակազրկումները չազդեն մեր ընտրանու ելույթների վրա: Եվ արդեն հիմա հավաքի են հրավիրվում մոտ 25 ֆուտբոլիստներ:

Անդրադառնալով Հայաստանի առաջնությանը, Ռուբեն Հայրապետյանը նշեց, որ թիմերի ցածր խաղամակարդակը հիմնականում պայմանավորված է ֆինանսական խնդիրներով: Ակումբները հովանավորների խնդիր ունեն, երկար ժամկետով ներդրումներ են անհրաժեշտ: Ցավալի էր «Իմպուլսի» լուծարումը: «Բանանցի» նախագահ Սարգիս Իսրայելյանի հրաժարականը պայմանավորված էր զուտ թիմի ցածր արդյունքներով: Ըստ Հայրապետյանի, «Բանանցի» հովանավորը հայկական ֆուտբոլի մեծ սիրահար է եւ ամեն ինչ կանի, որպեսզի ակումբը բարգավաճի, իսկ թիմը հաջող հանդես գա:

ՀՖՖ նախագահն անդրադարձավ նաեւ «Ուրարտուի» խնդրին, որն առաջին խմբում հանդես գալու համար պետք է 80 մլն դրամ գրավ դնի ֆեդերացիայում: Նա նշեց, որ զրուցել է ակումբի ղեկավարության հետ, որոնք չգիտեն դեռ, թե որտեղից են ֆինանսական միջոցներ հայթայթելու: Ռուբեն Հայրապետյանը չի ցանկանում, որ «Ուրարտուն» արժանանա «Իմպուլսի» ճակատագրին:

Անդրադառնալով իսլանդացիների հետ խաղից հետո երիտասարդական հավաքականի գլխավոր մարզիչ Ռաֆայել Նազարյանի խոսքերին, որը շատ գոհ էր մնացել ֆուտբոլիստներից, ՀՖՖ նախագահը նշեց, որ դա բարոյական չէ, որ մարզիչն իրավունք չուներ այդպես արտահայտվելու պարտված խաղի մասին: Ըստ նախագահի, մարզիչը լրագրողների ու ֆուտբոլասերների հետ շփվելու խնդիր ունի: Ռուբեն Հայրապետյանը գտնում է, որ Նազարյանը լավ մարզիչ է եւ կարող է իր սաների հետ հաջողության հասնել:

Ինչպես հայտնի է, այս տարի լրանում է «Արարատի» մեծ հաղթանակի 40-ամյակը: Ռուբեն Հայրապետյանը տեղեկացրեց, որ պատրաստվում են այդ հոբելյանը նշել:

## Չորսի մրցաշարը կմեկնարկի հունիսի 27-ին

**Մոսկվայի «Սպարտակը», «Զենիթը», Դոնեցկի «Շախտյորն» ու Կիեւի «Դինամոն» որոշել են առաջին քայլը կատարել միավորված առաջնության կազմակերպման հարցում: Այս թիմերի մասնակցությամբ հունիսի 27-ին մեկնարկում է ընկերական մրցաշարը: Տարբեր երկրներ ներկայացնող մրցակիցները միմյանց հետ կխաղան սեփական եւ մրցակցի դաշտերում: Առաջին խաղում հունիսի 27-ին «Շախտյորը» կհյուրընկալվի «Զենիթին»: 3 օր անց ուկրաինական ակումբը կհյուրընկալի «Սպարտակին» եւ խաղադաշտում միմյանց կհանդիպեն Հենրիխ Մխիթարյանն ու Յուրա Մովսիսյանը: Հուլիսի 3-ին մրցակիցները կրկին խաղադաշտ դուրս կգան՝ այս անգամ Մոսկվայում: 3 օր անց Դոնեցկում կկայանա «Շախտյոր»-«Զենիթ» հանդիպումը: Մրցաշարը կավարտվի հուլիսի 7-ին «Դինամոյի» եւ «Սպարտակի» մրցավեճով:**

## ՊՍԺ-ն մտադիր է հրավիրել Վիլաշ-Բոաշին

Ֆրանսիական ՊՍԺ-ն թիմի գլխավոր մարզիչ Կառլո Անչելոտիին փոխարինող է փնտրում: Ակումբը պատրաստ է թիմ հրավիրել «Տոտենհեմի» գլխավոր մարզիչ Անդրե Վիլաշ-Բոաշին՝ որպես փոխհատուցում վճարելով 10 մլն ֆունտ ստեռլինգ:

Ճիշտ է, Բոաշը հերքում է, որ բանակցում է ՊՍԺ-ի հետ: Եթե գործարքը կայանա, ապա ՊՍԺ-ն կթույլատրի Կառլո Անչելոտիին ժամկետից շուտ խզել պայմանագիրն ու տեղափոխվել Մադրիդի «Ռեալ»:

### ՇԱԽՄԱՏ

## Դավիթ Պառավյանը շարունակեց հաղթարշավը

**Բուլղարիայում ընթացող շախմատի մրցաշարի 3-րդ տուրում Ռուսաստանը ներկայացնող Դավիթ Պառավյանը նոր հաղթանակ տոնեց Դանի Ռազնիկովի հետ մրցավեճում: Դավիթը 3 միավորով 8 շախմատիստների հետ գլխավորում է աղյուսակը:**

**2,5 միավորով 28-րդ տեղում է Ավետիք Գրիգորյանը, որը պարտության մատնեց Մարի Գոմեսին: Տիգրան Պետրոսյանը 2 միավորով 51-րդ տեղում է: Նա հաղթեց Գաբրիել Վոյտանեուին: Գրիգոր-Սեւակ Մխիթարյանը 2 միավորով 76-րդ տեղում է: Նա պարտության մատնեց Դանիել-Բոգդան Դեացին: Բուլղարիան ներկայացնող միջազգային վարպետ Վալենտին Փանբուկչյանը եւս հաղթանակ տոնեց՝ առավելության հասնելով Բորիս Գուվենի նկատմամբ: Նա վաստակել է 2 միավոր:**

## Յուրա Մովսիսյանն ընդգրկվել է 33 լավագույնների ցանկում




**ՀՀ հավաքականի եւ Մոսկվայի «Սպարտակի» հարձակվող, ՌԴ առաջնության լավագույն ռմբարկուներից մեկը ճանաչված Յուրա Մովսիսյանն ընդգրկվել է Ռուսաստանի 33 լավագույն ֆուտբոլիստների ցանկում: Յուրան աջ եզրային հարձակվողների ցանկում եզրափակում է լավագույն եռյակը: Առաջինն «Անժիում» հանդես եկող Սամուել Էտո՛Օ-ն է, 2-րդը՝ Ահմեդ Մուսան (ԲԿՄԱ):**

**Առաջնության լավագույն ֆուտբոլիստ է ճանաչվել Մոսկվայի ԲԿՄԱ-ի դարպասապահ Իգոր Ակինֆեեւը: Լավագույն մարզչի մրցանակը կստանա երկրի չեմպիոն եւ գավաթակիր ԲԿՄԱ-ի գլխավոր մարզիչ Լեոնիդ Սլուցկին: Լավագույն մրցավար է ճանաչվել Ալեքսանդր Եգորովը, իսկ «Անժիի» նախագահ Սուլեյման Քերիմովը կպարգեւատրվի «ֆուտբոլի զարգացման համար» մրցանակով:**

## Կառլսենին հանձնվեց «Օսկարը»

4-րդ տարին անընդմեջ նորվեգացի գրոսմայստեր Մագնուս Կառլսենը ճանաչվեց տարվա լավագույն շախմատիստ՝ արժանանալով շախմատային «Օսկարին»: Կառլսենին «Օսկարը» հանձնել է «64» շախմատային ամսագրի գլխավոր խմբագիր Մարկ Գլուխովսկին: Ստանալով մրցանակը, Կառլսենը նշել է, որ իր կարծիքով ինքն արժանի էր «Օսկարին»:

## Մեսին մեղադրվում է հարկերից խուսափելու մեջ

**«Բարսելոնի» հարձակվող Լիոնել Մեսին եւ նրա հայրը՝ Օրասիոն մեղադրվում են 2007-2009-ին հարկեր վճարելուց խուսափելու մեջ: Ըստ նախնական տվյալների, նրանք հարկային ծառայությանը 4 մլն եվրո քիչ են վճարել: Հարկային ծառայության բողոքը ներկայացվել է առաջին ատյանի դատարան:**

**Մեսիին զարմացրել է հարկային ծառայության մեղադրանքը. «Մամուլում կարդացի հարկային ծառայության մեղադրանքների մասին: Ապշած եմ: Երբեք ոչ մի օրենք չենք խախտել: Միշտ տեղեկանքը լրացրել ենք հարկային խորհրդականի օգնությամբ: Նա այժմ կզբաղվի այդ հարցով»:**

**Եթե մեղադրանքը հաստատվի, Մեսիին 2-6 տարով ազատազրկում է սպառնում:**

## Արտուրո Գատին ընդգրկվեց Փառքի սրահում

**Թեթեւ եւ առաջին կիսաթեթեւ քաշային կարգերում աշխարհի նախկին չեմպիոն Արտուրո Գատին, որ 2009-ին 37 տարեկանում մահացել էր, հետմահու ընդգրկվել է բռնցքամարտի միջազգային Փառքի սրահում:**

**Գատին ծնվել է Իտալիայում, մանկությունն անցկացրել է Մոնրեալում, այնուհետեւ տեղափոխվել է ԱՄՆ, որտեղ էլ զբաղվել է պրոֆեսիոնալ բռնցքամարտով: Նրա անցկացրած 4 մենամարտերը ճանաչվել են տարվա լավագույն մենամարտ (1997, 1998, 2002, 2003-ին): 1997-ին նա հաղթող է ճանաչվել «Տարվա նոկաուտ» անվանակարգում:**

**Փառքի սրահում ընդգրկվել է նաեւ կիսածանր եւ առաջին ծանր քաշային կարգերում աշխարհի նախկին չեմպիոն, ամերիկացի Վիրջիլ Հիլը, որն աշխարհի չեմպիոնի տիտղոսի համար անցկացրած 29 մենամարտերից միայն 5-ում է պարտվել: Նա 20 տարի շարունակ չեմպիոնական մենամարտեր է անցկացրել տարբեր վարկածներով աշխարհի չեմպիոնի գոտիների համար:**




**Փառքի սրահում ընդգրկված 3-րդ բռնցքամարտիկը հարավկորեացի Յու Մյոն Ուն է, որը 21 չեմպիոնական մենամարտերից միայն մեկում է պարտվել: Նա առաջին հարավկորեացին էր, որին հաջողվել է ընդգրկվել աշխարհի ուժեղագույն 10 բռնցքամարտիկների շարքում:**

*Էջը պատրաստեց* ԱՇՈՏ ՀԱՅՐԱՊԵՏՅԱՆԸ

# «Հացը լեռներում» տոնածիսական կերակրատեսակների 5-րդ ցուցահանդես

Օրերս Երեւանի «Էրեբունի» թանգարանի տարածքում տեղի ունեցավ «Հացը լեռներում» տոնածիսական կերակրատեսակների 5-րդ ցուցահանդես-փառատոնը, որի ժամանակ հայ խոհարարները ներկայացրեցին հայկական ծիսական ուտեստների շուրջ 60 տեսակ: Միջոցառման նպատակը մեր ազգային խոհանոցի ցուցադրումն է հանրության լայն շերտերին: Ներկայացվեցին եկեղեցական 13 տոներ: Ցուցադրվեց, թե այդ տոների ժամանակ ինչ կերակրատեսակներ են դրվել սեղանին, ինչ ձեւավորմամբ եւ այդ կերակրատեսակներն ինչ նշանակություն են ունեցել: Այս մասին լրագրողների հետ հանդիպման ժամանակ հայտնեցին «Հայ խոհարարական ավանդույթների զարգացման եւ պահպանման» ՀԿ նախագահ Սեդրակ Մամուլյանը, Արենի գինու փառատոնի ղեկավար Նունե Մանուկյանը եւ «Երիտասարդություն» ՀԿ նախագահ Գեւորգ Մկրտչյանը:



«Հացը լեռներում» խորագիրը ցուցահանդես-փառատոնը ստացել է նկարիչ Աղասի Խանջյանի համանուն կտավից: Փառատոնի մուտքն անվճար էր, բայց ուտեստները` վճարովի: Մամուլյանի փոխանցմամբ` վաճառքից գոյացած գումարի որոշ չափն իրենք ծախսելու են բարեգործական նպատակներով:

«Հայ խոհարարական ավանդույթների զարգացման ու պահպանման» հասարակական կազմակերպության ղեկավար Սեդրակ Մամուլյանի ներկայացմամբ` սա լավագույն միջոցն է երկիրը զբոսաշրջիկներին ներկայացնելու եւ գրավիչ դարձնելու համար, քանի որ մարդու մոտ կենսաբանորեն ամենալավը տպավորվում են տեսածն ու համտեսածը, իսկ ամենավերջում մոռացվում է քիմքի արձանագրած զգացողությունը: Հասարակական կազմակերպության քարտուղար Վահե Անթանեսյանը այս ամենում տեսնում է մեկ այլ նպատակ: «Դա իր մեջ դաստիարակչական մեծ խորհուրդ ունի, դա իր մեջ ունի նաեւ հայապահպանության խորհուրդ: Դրա միջոցով նաեւ մենք պետք է մեզ զերծ պահենք օտար եւ այլասերված ինչ-որ ազդեցություններից: Դա մեր զենքերից մեկն է եւ շատ հզոր միջոց է հային հայ պահելու»:

Այդպես օրինակ` կազմակերպվող փառատոններն նպաստել են տասնյակ բաղադրատոմսերի վերականգնմանը, բայց դեռ պետք է վերականգնել նաեւ հայկական տոները նշելու ավանդույթը: Վահե Անթանեսյանն, օրինակ, աշխարհի բոլոր երկրներում կազմակերպվող դիմակահանդեսներում տեսնում է հայկական հիմք, որը գալիս է զուտ հայկական տոնից` Բարեկենդանից:

Փառատոնի ընթացքում նաեւ հացի քարոզչություն էր կատարվում: Այնտեղ էին նաեւ բրուտագործ, որը տեղում կավագործի մասնագիտությունն էր ցուցադրում: Գեղարվեստական մասը հագեցած էր, որին մասնակցելու էր նաեւ «Պարենք հայերեն» չքնաղ երիտասարդական նախաձեռնությունը:

**ԳԱՐԻԿ ԱՎԵՏԻՍՅԱՆ**

# Իտալական խոհանոցի շաբաթ Երեւանում

Հունիսի 17-23-ը Երեւանում կընթանա իտալական խոհանոցի շաբաթ, որին այս տարի կմասնակցեն մայրաքաղաքի 16 ռեստորաններ: Համադամասերների դատին կներկայացվեն Իտալիայի տարբեր շրջաններին բնորոշ կերակուրներ:

Ինչպես նշել է Հայաստանում Իտալիայի դեսպան Բրունո Սկապինին հունիսի 13-ին կայացած մամուլի ասուլիսում, իտալական խոհանոցը հայտնի է ողջ աշխարհում, ինչին նպաստում են երկրի աշխարհագրական դիրքը եւ կերակրատեսակների պատրաստման համար օգտագործվող մթերքների բազմազանությունը: «Իտալիայի խոհանոցի տեսակետից դա իսկական կալեյդոսկոպ է: Ծանոթանալ իտալական խոհանոցին` նշանակում է ճանապարհորդություն կատարել Իտալիայի մշակույթի եւ պատմության գծով», - նկատել է Սկապինին, հիշեցնելով, որ «միջերկրածովյան սննդակարգը» ՅՈՒՆԵՍԿՕ-ի կողմից ճանաչվել է մարդկության համաշխարհային նվաճում:

**ԱՐՄԻՆՖՈ**

# Լենինգրադյան փողոց-Ծիծեռնակաբերդի խճուղի հատվածը այսօրվանից երթեւեկելի է

Ինչպես տեղեկացանք Երեւանի քաղաքապետարանի տեղեկատվության եւ հասարակայնության հետ կապերի վարչությունից, ավարտվում են Լենինգրադյան փողոցը եւ Իսակովի պողոտան իրար միացնող ճանապարհի կարեւորագույն հանգույցներից մեկի` Լենինգրադյան փողոցից դեպի Ծիծեռնակաբերդի խճուղի տանող թունելային մասի վերգետնյա հատված ասֆալտապատման աշխատանքները: Երթեւեկը Լենինգրադյան փողոց - Ծիծեռնակաբերդի խճուղի հատվածում կվերականգնվի այսօր առավոտյան:

Այս թունելի շինարարությունը տեւեց ավելի քան 1 տարի եւ փետրվարին նախատեսվածի փոխարեն ավարտվեց հունիսին: Այս հատվածով է անցնում երեք վարչական շրջաններից` Աջափնյակից, Դավթաշենից եւ Մալաթիա-Սեբաստիայից դեպի մայրաքաղաքի կենտրոնական եւ այլ հատվածներ գնացող տրանսպորտային հոսքի հիմնական մասը: Շինարարության անհասկանալի ձգձգումները, որոնց անդրադարձել ենք մեր թերթում, այս ամբողջ ժամանակահատվածում բազմաթիվ անհարմարություններ եւ տհաճություններ պատճառեցին ամեն օր այդ հատվածով անցնող հազարավոր երեւանցիների:

Հաղորդվում է նաեւ, որ ճանապարհն ամբողջությամբ ավարտելու դեպքում զգալիորեն կբեռնաթափվի Ծիծեռնակաբերդի խճուղու եւ Աթենքի փողոցի տրանսպորտային հոսքը: Ըստ քաղաքապետարանի հաղորդագրության` ավարտման փուլում է նաեւ Իսակովի պողոտայում կառուցվող կամրջի շինարարությունը, որտեղից սկիզբ է առնելու վերնշյալ ճանապարհը Իսակովի պողոտայի կողմից: Այժմ ընթանում են կամրջի վերջնական շերտի բետոնալցման աշխատանքները:

**Ա. Մ.**

**Վաճառվում է**

4 սեն. բնակարան Եր. Քոչարի փ. (եկեղեցու մոտ, 16/11 հ., 103 քմ), մշտ. ջուր, հին վերանորոգում, փոխված էլ. լարեր, 2 պատշգամբ, գեղեցիկ տեսարան, արեւկող, գինը` պայմանագրային: Հեռ.` 093-505-807, (010) 222-730

www.azg.am

*Էյ-Էն Աուդիտ ՓԲԸ*
*AN Audit CJSC*
*Գտնվելու վայրը՝ ՀՀ, Երեւան, 0033, Գյուլբենկյան փող. 30/3 շենք, թիվ 129*
*Address: apt. 129, 30/3 Gyulbenkyan str., 0033, Yerevan, Armenia*

## Անկախ աուդիտորական եզրակացություն

«Սամկոն» ՍՊԸ մասնակիցներին

Մենք աուդիտի ենք ենթարկել «Սամկոն» ՍՊԸ (այսուհետ՝ Ընկերություն) 2012 թ. դեկտեմբերի 31-ին ավարտվող տարվա կից ներկայացվող ֆինանսական հաշվետվությունները, որոնք ներառում են՝ առ 31 դեկտեմբերի 2012 թ. ֆինանսական վիճակի մասին հաշվետվությունը, այդ ամսաթվին ավարտվող տարվա համապարփակ ֆինանսական արդյունքների մասին հաշվետվությունը, սեփական կապիտալում փոփոխությունների մասին հաշվետվությունը, դրամական միջոցների հոսքերի մասին հաշվետվությունը, ինչպես նաեւ ծանոթագրությունները, որոնք ներառում են հաշվապահական հաշվառման քաղաքականության հիմնական դրույթները եւ այլ բացատրական տեղեկատվություն:

***Ղեկավարության պատասխանատվությունը ֆինանսական հաշվետվությունների համար***

Ընկերության ղեկավարությունը պատասխանատու է սույն ֆինանսական հաշվետվությունների պատրաստման եւ ճշմարիտ ներկայացման համար՝ ֆինանսական հաշվետվությունների միջազգային ստանդարտներին համապատասխան: Այդ պատասխանատվութունը ներառում է այնպիսի ներքին վերահսկողության համակարգի մշակում, ներդրում եւ կիրառում, որը ղեկավարությունն անհրաժեշտ կհամարի էական խեղաթյուրումներից (թե սխալի, թե խարդախության արդյունքում առաջացող) զերծ ֆինանսական հաշվետվությունների պատրաստման եւ ճշմարիտ ներկայացման համար, ինչպես նաեւ տեղին հաշվապահական հաշվառման քաղաքականության ընտրություն եւ կիրառում, ողջամիտ հաշվապահական գնահատականների կատարում:

***Աուդիտորի պատասխանատվությունը***

Մեր պատասխանատվությունն է անցկացված աուդիտի հիման վրա արտահայտել կարծիք սույն աուդիտորական եզրակացությանը կից ֆինանսական հաշվետվությունների վերաբերյալ: Մենք աուդիտն անցկացրել ենք աուդիտի միջազգային ստանդարտներին համապատասխան: Այդ ստանդարտներով պահանջվում է, որ մենք հետեւենք աուդիտորի վարքագծի կանոններին եւ աուդիտը պլանավորենք եւ իրականացնենք այնպես, որ ձեռք բերենք ողջամիտ հավաստիացում այն մասին, թե արդյոք ֆինանսական հաշվետվությունները զերծ են էական խեղաթյուրումներից:

Աուդիտը ներառում է այնպիսի ընթացակարգերի իրականացում, որոնք թույլ են տալիս ձեռք բերել աուդիտորական ապացույցներ ֆինանսական հաշվետվություններում ներկայացված գումարների եւ բացահայտումների վերաբերյալ: Կիրառված ընթացակարգերի ընտրությունը կախված է աուդիտորի դատողությունից, ինչը ներառում է նաեւ ֆինանսական հաշվետվություններում այնպիսի էական խեղաթյուրումների ռիսկի գնահատումը, որոնք կարող են պայմանավորված լինել թե խարդախությամբ եւ թե սխալներով: Այդ ռիսկերի գնահատումներն իրականացնելիս աուդիտորը հաշվի է առնում ներքին վերահսկողության համակարգը, որքանով այն տեղին է ֆինանսական հաշվետվությունների պատրաստման եւ ճշմարիտ ներկայացման համար, որպեսզի նախատեսի աուդիտորական անպիսի ընթացակարգեր, որոնք տեղին են տվյալ հանգամանքներում, բայց ոչ թե Ընկերության ներքին վերահսկողության համակարգի վերաբերյալ կարծիք արտահայտելու նպատակով: Աուդիտը նաեւ ներառում է կիրառված հաշվապահական հաշվառման քաղաքականության տեղին լինելու եւ ղեկավարության կողմից կատարված հաշվապահական գնահատումների հիմնավորության գնահատում, ինչպես նաեւ ֆինանսական հաշվետվությունների ընդհանուր ներկայացման գնահատում: Մենք գտնում ենք, որ մեր ձեռք բերած աուդիտորական ապացույցները բավարար եւ համապատասխան հիմք են հանդիսանում մեր կարծիքի համար:

***Կարծիք***

Մեր կարծիքով, ֆինանսական հաշվետվությունները, բոլոր էական առումներով, ճշմարիտ են ներկայացնում «Սամկոն» ՍՊԸ-ի առ 31 դեկտեմբերի 2012 թ. ֆինանսական վիճակը, ինչպես նաեւ գործունեության արդյունքներն ու դրամական միջոցների հոսքերը նույն ամսաթվին ավարտվող տարվա համար՝ ֆինանսական հաշվետվությունների միջազգային ստանդարտներին համապատասխան:

*Արթուր Հարությունյան*
*Տնօրեն*
*«Էյ-Էն Աուդիտ» ՓԲԸ*
*Երեւան*
*30 ապրիլի 2013 թ.*

*Կարեն Խաչատրյան*
*Աուդիտոր*

## «Սամկոն» ՍՊԸ
## Ֆինանսական վիճակի մասին հաշվետվություն

| *Հազար դրամ* | Ծան. | 31.12.2012 թ. | 31.12.2011 թ. |
|---|---|---|---|
| **Ակտիվներ** | | | |
| **Ոչ ընթացիկ ակտիվներ** | | | |
| Հիմնական միջոցներ | 6 | 511,421 | 427,567 |
| Այլ ոչ ընթացիկ ակտիվներ | | - | 5,140 |
| **Ընդամենը ոչ ընթացիկ ակտիվներ** | | **511,421** | **432,707** |
| Պաշարներ | 7 | 2,497,514 | 2,461,402 |
| Առեւտրական դեբիտորական պարտքեր | 8 | 925,839 | 657,159 |
| Դեբիտորական պարտքեր հարկերի գծով | | 43,615 | 72,527 |
| Տրված ընթացիկ կանխավճարներ | 9 | 65,614 | 138,057 |
| Տրված փոխառություններ | | 2,500 | - |
| Դրամական միջոցներ եւ դրանց համարժեքներ | 10 | 616 | 250 |
| Այլ ընթացիկ ակտիվներ՝ հետաձգված ԱԱՀ-ի գծով | | 9,951 | - |
| **Ընդամենը ընթացիկ ակտիվներ** | | **3,545,649** | **3,329,395** |
| **Ընդամենը ակտիվներ** | | **4,057,070** | **3,762,102** |
| **Սեփական կապիտալ եւ պարտավորություններ** | | | |
| Կանոնադրական կապիտալ | 11 | 388,281 | 388,281 |
| Կուտակված շահույթ | | 838,607 | 1,151,371 |
| Պահուստային կապիտալ | | 85,137 | - |
| **Ընդամենը սեփական կապիտալ** | | **1,312,025** | **1,539,652** |
| Երկարաժամկետ բանկային վարկեր | 12 | 416,978 | 187,202 |
| Հետաձգված հարկային պարտավորություններ | 15 | 6,492 | - |
| **Ընդամենը ոչ ընթացիկ պարտավորություններ** | | **423,470** | **187,202** |
| Կարճաժամկետ բանկային վարկեր | 12 | 199,468 | 180,831 |
| Կարճաժամկետ փոխառություններ | 13 | 1,081,554 | - |
| Առեւտրական կրեդիտորական պարտքեր | | 238,744 | 264,592 |
| Շահութահարկի գծով պարտավորություն | | 35,575 | 16,657 |
| Ընթացիկ հարկային պարտավորություններ | | - | 116 |
| Կարճաժամկետ կրեդիտորական պարտքեր մասնակիցներին | | 766,234 | 1,573,052 |
| **Ընդամենը ընթացիկ պարտավորություններ** | | **2,321,575** | **2,035,248** |
| **Ընդամենը սեփական կապիտալ եւ պարտավորություններ** | | **4,057,070** | **3,762,102** |

*Տնօրեն*
*Սամվել Գորոյան*
*30 ապրիլի 2013 թ.*

*Գլխավոր հաշվապահ*
*Մանվել Մկրտչյան*

## Համապարփակ ֆինանսական արդյունքների մասին հաշվետվություն

| *Հազար դրամ* | Ծան. | 2012 թ. | 2011 թ. |
|---|---|---|---|
| Հասույթ | 16 | 2,424,432 | 1,800,201 |
| Վաճառքի ինքնարժեք | 17 | (1,642,661) | (1,359,908) |
| **Համախառն շահույթ** | | **781,771** | **440,293** |
| Իրացման ծախսեր | 18 | (185,158) | (102,902) |
| Վարչական ծախսեր | | (30,544) | (17,250) |
| Այլ եկամուտներ | | 423 | - |
| Այլ ծախսեր | 19 | (27,296) | (16,250) |
| Ֆինանսական ծախսեր | 20 | (65,514) | (38,110) |
| Փոխարժեքային տարբերություններից շահույթ (վնաս) | | 156,973 | (13,808) |
| **Շահույթ մինչեւ հարկումը** | | **630,655** | **251,973** |
| Շահութահարկի գծով ծախս | 21 | (92,048) | (59,975) |
| **Շահույթ հարկումից հետո** | | **538,607** | **191,998** |
| Այլ համապարփակ ֆինանսական արդյունք | | - | - |
| **Ընդամենը համապարփակ ֆինանսական արդյունք** | | **538,607** | **191,988** |

*Տնօրեն*
*Սամվել Գորոյան*
*30 ապրիլի 2013 թ.*

*Գլխավոր հաշվապահ*
*Մանվել Մկրտչյան*

Լրատուական գործունէութիւն իրականացնող` «Ազգ օրաթերթ» ՍՊԸ, Երեւան, Հանրապետութեան 47: Պետական գրանցման վկայականի համարը` 04 Ա N 047261, տրուած` 18.02.00 թ.:
Թողարկման պատասխանատու, գլխ. խմբ. Յակոբ Աւետիքեան: Տպաքանակ` 3000, ստորագրուած է տպագրութեան 13.6.2013, գինը` 100 դրամ, տպագրուում է «Տիգրան Մեծ» հրատարակչութեան տպարանում` Արշակունեաց 2: